Այս՝ ամենեզիայով տառապողը երեւի մոռացել է, որ անցյալ տարի Վենսի հետ լուսանկարը միայն ինքն էր հրապարակել, Վենսն իր սոցցանցում բառ չէր գրել Փաշինյանի հետ հանդիպում կամ խոսակցություն ունենալու մասին: Դրանից հետո՝ մինչեւ օգոստոս, Վաշինգտոնը որեւէ անգամ ցույց չի տվել, թե գիտի Փաշինյանի գոյության մասին:

Կարդացեք՝ էջ 4

Զոշուա Կուչերայի կարծիքով, ՀՀ իշխանություններն անընդհատ խոսում են հայկական քաղաքականությանը Ռուսաստանի միջամտության մասին, բայց Եվրոպան եւ Ամերիկան բացահայտորեն են խոսում այդ մասին: «Ռուսական գործունեության մասին կան միայն անուղղակի ապացույցներ, մինչդեռ ԵՄ-ն եւ ԱՄՆ-ն բացահայտորեն միջամտում են»:

Կարդացեք՝ էջ 6

Հայաստանն է ավելի հզոր, թե՞ Ամերիկան: Այդ դեպքում ինչո՞ւ ենք մենք ներդրումներ անում, ինչո՞ւ նրանք մեր տնտեսության մեջ ներդրում չեն անում: Մենք այն եզակի երկիրն ենք, որ Իրանի եւ ՌԴ-ի դեմ ԱՄՆ-ի ու Թուրքիայի քաղաքականության մեջ խաղաքարտ դառնալու համար վճարել ենք տարածքով, հիմա էլ քեշ փող ենք տալիս:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 17 (4152), 12 փետրվար, հինգշաբթի, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Դեռ շաբաթներ առաջ գրել էինք, որ Սամվել Կարապետյանի հիմնած ուժը կոչվելու է «Ուժեղ Հայաստան», բայց վարչապետի թեկնածուի հարցում թիմը դժվար ընտրության առաջ է կանգնած: Ըստ ամենայնի, կհայտարարեն, որ դե ֆակտո ղեկավարը Սամվել Կարապետյանն է, որն օրենքով վարչապետի թեկնածու առաջադրվելու իրավունք չունի, քանի որ երկքաղաքացի է, իսկ դե յուրե թեկնածուն կլինի նրա եղբորորդին՝ Նարեկ Կարապետյանը: Բանն այն է, որ «Մեր ձեւով»-ում հասկանում են՝ շարժումը ստեղծվել է Սամվել Կարապետյանի անձի շուրջ, նա է, այսպես ասած, գլխավոր հերոսը, եւ հանրությունն ակնկալում է նրա անմիջական մասնակցությունը իշխանափոխությանը: Բայց եթե նրա թեկնածությունն առաջ բերելն այս փուլում անհնարին է, իրենց ուժի հաղթանակից եւ օրենսդրական փոփոխություններից հետո կդառնա հնարավոր: Երեկ կայացավ կուսակցության հիմնադիր համագումարը, նախագահ ընտրվեց Սամվել Կարապետյանը, տեղեկություններ տարածվեցին, որ վարչապետի թեկնածուն էլ է Սամվել Կարապետյանը: Իսկ այսօր Մարզահամերգայինում կուսակցության պրեզենտացիայի ժամանակ կհայտարարվի վարչապետի իրենց թեկնածուի անունը: Ըստ ամենայնի, կասվի՝ ընտրություններում հաղթելուց հետո առաջին քայլը լինելու է Սահմանադրության 148-րդ հոդվածի փոփոխությունը՝ պատգամավորների 2/3-ի նախաձեռնությամբ: Հոդվածը սահմանում է, որ կառավարության անդամին նույն պահանջներն են ներկայացված, ինչ պատգամավորին: Իսկ 202-րդ հոդվածում չի նշվում, որ 148-ը կարող է փոխվել հանրաքվեով, այսինքն՝ այն կարող է փոխել նաեւ ԱԺ-ն:

ՔՊ-ում կադրային սովն այն մակարդակի է հասել, որ մերժված թեկնածուն կրկին առաջադրվել է, եւ քաղաքական որոշում է կայացվել՝ նրան ընտրելու: Խոսքն ԱԺ առողջապահության մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար վանաձորցի բժիշկ Վանիկ Օհանյանի մասին է, որին եւ իր մրցակից Տրդատ Սարգսյանին 3 օր առաջ իշխող ֆրակցիան չէր ընտրել՝ չէր երաշխավորել այդ պաշտոնի համար: Անվավերների թիվն էր մեծ եղել, առնվազն 8 հոգի ընտրել էր երկու թեկնածուին էլ, եւ քվեարկությունը տապալվել էր: Պետք է նոր թեկնածու առաջադրեին, սակայն տեղեկացանք, որ երեկվա դրությամբ կրկին Վանիկ Օհանյանն է առաջադրվել, հավանաբար՝ այլ թեկնածու չի գտնվել, եւ ՔՊ-ն ստիպված է լինելու ընտրել վանաձորցուն: Հիշենք, որ այս պաշտոնը թափուր է Հռիփսիմե Հունանյանի հրաժարականից հետո: ՔՊ-ում, ըստ ամենայնի, գցել-բռնել են, որ մոտ 3 ամիս է մնացել ԱԺ լիազորությունների ավարտին, մեկին ընտրեն՝ յոլա տանեն:

Դիմակը պատռվեց

Վատ հիշողություն ունեցող մարդիկ չպետք է ստեն, որովհետեւ մոռանում են, թե նույն հարցին անցյալում ինչպես են պատասխանել, եւ խճճվում են իրենց ստերի մեջ: Անգամ «կռուտիտի» մեծ մասնագետ լինելը չի փրկում Նիկոլ Փաշինյանին՝ նա խճճվում է իր նախորդ ստերի մեջ, իրար հակասող թեզեր ու բացատրություններ բերում՝ մոռանալով, թե նախորդ անգամ նույն հարցին պատասխանելիս ինչ էր ասել: Եկեղեցու դեմ ծավալած արշավի մասին խոսելիս ամեն անգամ նա այդ զազրելի արշավի մի նոր պատճառաբանություն է նշում: Եվ դա մի բան է նշանակում՝ հիշողությունն այլեւս առաջվանը չէ: Ամռանը, երբ նոր էր սկսել արշավը, խոսում էր եկեղեցիների չուլանացման, կուսակրոնության խախտումների մասին: Հետո ասպարեզ ելան եկեղեցու ֆինանսավորման ոչ թափանցիկության, մոմերի վաճառքից ստացվող եկամուտների ու հարկերի, ավելի ուշ՝ հոգեւորականների՝ օտարերկրյա գործակալ, այլ երկրների հատուկ ծառայությունների «լեյտենանտներին» հաշվետու լինելու մեղադրանքները: Սկզբում խոսում էր Եկեղեցու բարենորոգման անհրաժեշտության մասին, որին ինքը մասնակցում է որպես շարքային հավատացյալ՝ Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ, հետո, երբ պարզվեց, որ մարդիկ այնքան էլ լավ չեն գիտակցում, որ ինքը որպես վարչապետ է այս պայքարին ձեռնամուխ եղել, եւ իր լծակները չեն բավարարում Եկեղեցին քանդելու համար, սկսեց բացահայտորեն հանդես գալ եւ Եկեղեցին զավթելու «ճանապարհային քարտեզ» կոչվող մի թղթի տակ էլ իր ստորագրությունը դրեց: Իսկ երբ 10 տիրադավ եպիսկոպոսներին շանտաժով իր կողմը տարավ, հասկացվեց, որ բարենորոգման խաղաթուղթն էլ է «վառվել»՝ Կճոյանով ու Միրզախանյանով ինչ բարեվարքություն: Հիմա քանի որ բոլորին պարզ է դարձել բուն նպատակը, արդեն խոսում է Եկեղեցու կողմից քաղաքականությանը խառնվելու մասին:

Վաղարշապատում երեկ տեղի ունեցած խուզարկությունների եւ 10 հոգու ձերբակալության «քավորը», ըստ մեր աղբյուրի, նորընտիր համայնքապետ Արգիշտի Մեխակյանն է: Ավագանու ամենամեծ ընդդիմադիր խմբակցության ղեկավար Սեւակ Խաչատրյանի թիմակիցների ձերբակալության հիմքում թեպետ դրել են նոյեմբերի 16-ի ընտրություններին «մարդկանց ուղղորդելու» մեղադրանքներ, սակայն պարզ է, որ նախընտրական բռնաճնշումներ են սկսել՝ ընդդիմության աչքը վախեցնելու նպատակով: Ասում են՝ Մեխակյանն է ղեկավարությանը համոզել, որ հիմիկվանից պետք է զբաղվել ընդդիմադիրներով՝ թույլ չտալ, որ ընտրություններին ընդառաջ ակտիվանան, պետք է բնում խեղդել ամեն ակտիվություն, եւ ինքն էլ է գործի անցել՝ համայնքի ընդդիմադիրների հետեւից է ընկել՝ պահակից մինչեւ ուսուցիչ, հայտնաբերում է եւ հարցերը լուծում: Մեր տեղեկություններով, Սեւակ Խաչատրյանի «Առաջ» կուսակցությունը մտնելու է Ռոբերտ Քոչարյանի ղեկավարած դաշինքի մեջ, ու նաեւ սա է այս ձերբակալությունների պատճառը:

ՇԱՐՈՒՆԱԿԻՐ ՄԱՌԱՅԵԼ ՔՊ-ԻՆ

Խորհրդարանը երեկ շուրջ 2 ժամ քննարկեց ՀՌՀ անդամ Հակոբ Հակոբյանի՝ մշակույթի նախկին նախարար Հակոբ Մովսեսի լիազորությունները դադարեցնելու մասին «Հայաստան» խմբակցության առաջարկը: Ընդդիմադիր պատգամավորները կարծում են, որ նա խախտել է ՀՌՀ անդամի կարգավիճակից բխող քաղաքական չեզոքության եւ զսպվածության պահանջները՝ քաղաքական գնահատականներ հնչեցնելով ՀՅԴ-ի հասցեին: Չնայած Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նկատառումներին, որ, իսկապես, վարքականոնի խախտում է տեղի ունեցել, ՔՊ-ականները երեկ անթաքույց պաշտպանեցին Հակոբ Մովսեսին՝ ըստ էության ցույց տալով, որ թքած ունեն անկախ կոչվող երկու մարմինների՝ ՀՌՀ-ի եւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վրա, կարեւորը՝ որ այնտեղ աշխատողները ծառայեն Փաշինյանին ու ՔՊ-ին: Ըստ ամենայնի՝ իշխող խմբակցությունը վաղը չի մասնակցի փակ-գաղտնի քվեարկությանը, իսկ ընդդիմությունը միայնակ բավարար ձայներ չունի, եւ ՔՊ-ի սրտի քարոզիչ Հակոբ Մովսեսը կշարունակի իր գործունեությունը. պետությունից փող կստանա՝ իբր անկախ հանձնաժողովի անդամ լինելու համար, բայց կշարունակի հարցազրույցներ տալ՝ հօգուտ քաղաքական ուժի եւ անձի:

ԴՐԱՆՔ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՉԵՆ, ԱՅԼ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ

*Մեր զրուցակիցն է «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ **Մանե Թանդիլյանը**:*

- Հայաստանում գտնվող ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսին դիվանագիտական ճանապարհով նամակ էիք փոխանցել՝ խնդրելով միջնորդել Բաքվի բանտերում պահվող հայերի ազատ արձակման հարցում: Տարբեր հայ գործիչներ եւ հայկական կառույցներ եւս դիմել են Վենսին՝ նույն խնդրով: Ըստ Ձեզ, հանրային դիվանագիտությունը որքանո՞վ կազդի Վաշինգտոնի վրա:

- ԱՄՆ-ն, որպես խաղաղարար դերակատարում ստանձնած պետություն, ունի առանձնահատուկ պատասխանատվություն այս խնդրի արդար եւ վերջնական լուծման հարցում: Տարբեր կառույցների եւ անհատների կողմից փոխնախագահ Վենսին ուղղված կոչերն ու նամակները չեն կարող մնալ անարձագանք: ԱՄՆ-ի միջնորդությամբ հաստատվող խաղաղությունը չի կարող լիարժեք կամ կայուն լինել, եթե չի ապահովում հայ գերիների վերադարձը: Գերիների վերադարձը ոչ միայն մարդասիրական, այլեւ քաղաքական վստահության հիմնարար պայման է:

- Մեծ ակնկալիք ունեմ, որ փոխնախագահ Վենսն այս հարցում ականջալուր կլինի ոչ թե կուլիսներում ներկայացվող ձեւակերպումներին, այլ մեր ժողովրդի իրական ձայնին՝ այն մարդկանց, ովքեր տարիներ շարունակ սպասում են արդարության եւ իրենց հարազատների վերադարձին: Խնդիրը չի կարելի դիտարկել զուտ դիվանագիտական հաշվարկների կամ տարածաշրջանային պայմանավորվածությունների շրջանակում՝ անտեսելով դրա հստակ մարդասիրական եւ քաղաքական էությունը: Ակնկալում եմ, որ նրա դիրքորոշումն ու հետագա քայլերը կլինեն համարժեք իրականությանը եւ կարտացոլեն այն պատասխանատվությունը, որը կրում է ԱՄՆ-ն՝ որպես խաղաղ գործընթացներում առանցքային դերակատար:

- Շուրջ երկամյա դադարից հետո Բաքվում վերսկսվել է Արցախի նախկին պետնախարար, գործարար Ռուբեն Վարդանյանի դեմ կեղծ դատավարությունը: Նրա նկատմամբ ձեր քաղաքական ուժի եւ անձամբ Ձեր վերաբերմունքը, ու պարտականությունն է՝ շարունակական ու համակարգված պայքար բոլոր հնարավոր հարթակներում՝ քաղաքական, իրավական եւ միջազգային: Քանի դեռ վերջին հայը չի վերադարձել իր տուն, այս պայքարը չի դադարելու՝ անկախ վայրից, ժամանակից կամ ճնշումներից:

- Ադրբեջանում մեծ հիստերիա են բարձրացրել եւ պնդում են, թե հայկական լոբբիստական կառույցները, հատկապես՝ ԱՄՆ-ում հայկական սփյուռքը, օգտագործելով Միացյալ Նահանգների փոխնախագահի հարավկովկասյան ուղեւորությունը, փորձում են ճնշում գործադրել Բաքվի վրա՝ հայ բանտարկյալների հարցով: Հիշատակում են նաեւ փետրվարի 9-ին ՀՀ նախագահական նստավայրի դեմ տեղի ունեցած ցույցը՝ Վենսի այցին ընդառաջ, նույն գերիների ազատ արձակման պահանջով: Դրան նաեւ Դուք մասնակցեցիք...

- Ադրբեջանի «հիստերիան» ոչ այլ ինչ է, քան պարզ մանիպուլյացիա: Իրական ճնշումը ոչ թե մենք ենք ստեղծում, այլ այն, որ դեռ կան հայ գերիներ, որոնք անարդար կերպով պահվում են Բաքվում: Ես առաջարկում եմ, որ ադրբեջանցիները, ի նշան «բողոքի», հրավիրեն ԱՄՆ բարձրաստիճան պաշտոնյային՝ սեփական աչքով տեսնելու այնտեղ գտնվող հայերի «դատավարությունները», պայմանները, տառապանքն ու փաստերը, թե ինչի համար են այդ մարդիկ «դատվում»: Աշխարհը պետք է տեսնի եւ ընդունի ճշմարտությունը, ոչ թե Բաքվի դեկլարացիաները կամ հնչեցրած պնդումները:

- Ողջամիտ կարծիք կա, որ հանրային դիվանագիտությունը (Public diplomacy) պետք է ոչ թե գեղեցիկ գաղափար լինի, այլ՝ ֆունկցիոնալ գործիք, որը հնարավորություն կտա ունենալ կոմպետենցիաներ՝ ինչպես օգտագործել օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնատար անձանց այցելությունները: Մյուս կողմից էլ՝ ունենք ՀՀ ներկայիս իշխանությունների, ըստ էության, անտարբեր դիրքորոշումը մեր գերեվարված հայրենակիցների ճակատագրի հանդեպ:

Ձեր զգացումները հայտնի են: Վարդանյանի մասին եւս ակնարկել եք Վենսին ուղղված նամակում: Ի՞նչ սպասումներ ունեք նրա դեմ շինծու դատավարությունից: Սպասե՞լ հրաշքի...

- Բաքվում ընթացող «դատավարություններից» որեւէ արդար սպասելիք չունեմ: Սակայն դա չի նշանակում, որ մենք կարող ենք կամ երբեւէ պետք է ընդունենք այնտեղ կայացվող «վճիռները»: Դրանք իրավական գործընթաց չեն, այլ՝ քաղաքական հաշվեհարդար: Մեր պարտքն

Արա ԱԼՈՅԱՆ

ԱՍԵԼ ԷԻՔ՝ ԳԱՆՔ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՆԵԼՈՒ ԵՆՔ, ԴԱ ԷԼ ՉԱՐԵՑԻՔ

2017-ին մի որոշում է ընդունվել, որի ձեռքն այսօր հենց իրենք՝ նախկին իշխանություններն են կրակն ընկել: Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը ներկայացրել է օրենսդրական փոփոխության առաջարկ՝ ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին օրենքում, ըստ որի՝ քննիչը հնարավորություն էր ստանում սահմանափակել կալանավորված անձի տեսակցությունները: Ոմանք առարկել էին, որ այդ սահմանափակումը չտարածվի այն անձանց վրա, ովքեր անարգել ելումուտ ունեն ՔԿՀ-ներ, այդ թվում՝ պատգամավորների: Սակայն նախարարը դա «անթույլատրելի» էր համարել: «...Որովհետեւ շատ մեծ թվով անձինք ստանալու են թույլտվություն՝ տեսակցելու կալանավորված անձանց: Մենք նպատակահարմար չենք համարում ընդլայնել տեսակցություն ունեցող անձանց շրջանակը, եթե քննիչն արգելանք է դրել տեսակցությունների վրա»,- ասել էր Հարությունյանը եւ շեշտել. «Կան երկրներ, որտեղ չկա նման սահմանափակումների պրակտիկա, բայց դա չի նշանակում, որ այդ փորձը պետք է բերենք Հայաստան»: Այսինքն, կարիք չկա ժողովրդավարական սկզբունքները պահելու, որովհետեւ ՀՀԿ-ն նոր էր հաղթել ընտրություններում եւ կարծում էր, որ հաջորդ 10 տարին մնալու է իշխանության: Եվ որոշումն ընդունվել էր, քանի որ ՀՀԿ-ն այդ պահին ուներ մեծամասնություն եւ որոշել էր սահմանափակել կալանավորված անձանց իրավունքները: Այսինքն, 2001-2017 թթ. պատգամավորներն անարգել եւ ցանկացած ժամի կարող էին գնալ կալանավայր, այցելել կալանավորվածներին, իսկ 2017-ից իրավիճակը փոխվեց՝ քննիչի որոշմամբ տեսակցություններն արգելվեցին նաեւ պատգամավորների համար: Նման հնարավորություն թողնվեց միայն ՄԻՊ-ի եւ հոգեւորականների համար:

2017-ին, ի դեպ, գլխավոր դատախազն Արթուր Դավթյանն էր, ԱԺ նախագահը՝ Արա Բաբլոյանը, ՀՀ նախագահը՝ Սերժ Սարգսյանը: Նրանց համատեղ որոշմամբ է դա տեղի ունեցել, եւ այժմ, երբ նախկին իշխանությունը դարձել է ընդդիմություն, ինքն իր փորած փոսն է ընկել: Ընդդիմադիր պատգամավորները, որոնց մանդատի միակ արդարացումն այսօր մնացել է քաղբանտարկյալներին այցելելը, հաճախ քննիչի որոշմամբ չեն կարողանում դա անել, որովհետեւ, օրինակ, Արշակ սրբազանի, Դավիթ Համբարձումյանի, Վարդան Ղուկասյանի տեսակցությունների վրա արգելք է դրված:

ԼՀԿ խմբակցության պատգամավոր **Տարոն Սիմոնյանը** 2020-ին փորձել է փոխել իրավիճակը. ներկայացրել է նախագիծ՝ պատգամավորների անարգել տեսակցելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ, սակայն այս անգամ էլ Նիկոլ Փաշինյանի իշխանությունն է մերժել. ՀՀԿ-ի ընդունած որոշումն իրենց սրտով էլ էր: Տարոն Սիմոնյանը մեզ ասաց. «Բոլոր իշխանությունները ձգտում են սահմանափակել ընդդիմության հնարավորությունները, անկախ նրանից՝ դա ՀՀԿ-ն է, թե ՔՊ-ն: Բնականաբար, հենց մեկը գալիս է իշխանության, մոռանում է իր մտքերն ու վարքագիծը: Եթե նայեք նախագծի ներկայացման նիստը, կտեսնեք, որ դա էինք ասում ՝ ժամանակին դուք եք նախաձեռնել սա, բայց իշխանությունը մերժել է, ասել եք՝ հենց գանք իշխանության, դա հանվելու է, բայց այդպես չեղավ, իրենց խնդիրը բացարձակ իշխանությունը պահելն էր»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Հայաստանում վերածնվում է «անոնիմկայի» մշակույթը

Գլխավոր դատախազությունը հրապարակել է ազդարարման համակարգի, ինչպես ժողովուրդն է ասում՝ «գործ տվողների» միջոցով նախաձեռնված քրեական վարույթների վիճակագրությունը: Ըստ այդմ՝ ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի՝ Azdararir.am-ի միջոցով 2025-ին ստացվել է 600 ազդարարում, նախաձեռնվել է 26 վարույթ: 2019-2025 թթ՝ azdararir.am-ի միջոցով ստացվել է 1610 ազդարարում, որոնցից 1324-ը՝ անանուն:

Ազդարարման դեպքերից 73-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, դրանցից 7-ն ուղարկվել է դատարան, 2-ով կա դատական ակտ: Այսինքն, բողոքների ընդամենը 4,5 տոկոսն է վարույթի նյութ դարձել: Անանուն բողոքների թիվը տարեցտարի ավելացել է: Դրանք խրախուսվում են, դառնում մեր կյանքի մասը, ինչպես 1937 թվին: 2021-ին Գլխավոր դատախազությունում ազդարարման համակարգի միջոցով ստացված 75 ազդարարումներից 70-ը եղել է անանուն, 2022-ին 116 ազդարարումներից՝ 74-ը, 2023-ին 116-ից՝ 99-ը, եւ ամենաթարմ տվյալը՝ 2025-ին 600 ազդարարումից 508-ն անանուն է:

Փաստորեն, «անոնիմկայի» մշակույթը Հայաստանում ծաղկում է, ու հատկանշական է, որ դրանց բացարձակ մեծամասնությունը, ըստ դատախազության, կոռուպցիոն բնույթի է: Չենք զարմանա՝ որ նախկիններին վերաբերող: Մեխանիզմը հետեւյալն է. «անոնիմկայով» հարուցում են վարույթ, քննում, հետո կարճում, բայց մինչեւ կարճելը, երեւի տանում, Փաշինյանին ցույց են տալիս, թե՝ տես, ինչքան խախտում ենք գտել, օրինակ, մի 18 քմ-անոց հողամաս կամ մի հատ «բուդկա»: Նա էլ, ուրախ-ուրախ, իր ՖԲ էջում գրում է, թե հատիկ-հատիկ հետ եմ բերում: Չկա մեկը, որ ասի՝ մի հատ բերեք, տեսնենք՝ ինչ եք արել, ինչ կինո է սա: Դե, խեղճ ու հպարտ քաղաքացի, արի ու հասկացիր՝ արդյոք նորմալ ազդարարողնե՞ր են եղել «գործ տվողները», թե՞ հենց քննիչ- դատախազներն են գրել անցանկալիների դեմ ու ներկայացրել որպես «անանուն հաղորդում»:

Փաստաբան **Հովիկ Արսենյանը**, որը երկար տարիներ քննիչ է աշխատել, կարծում է, որ ազդարարման համակարգը պետք է հստակ վերահսկողության ենթարկվի, ինչը հիմա չկա: Հիշեցնում է, որ անցյալ դարի առաջին կեսերին անանուն նամակների միջոցով գործեր հարուցելն ընդունված է եղել, բայց հետագայում՝ նույն խորհրդային տարիներին, հրաժարվել են այդ համակարգից: «Ընդունվեց որոշում, որ անանուն նամակները պետք է թողնել անհետեւանք: Սա իրականում դեմոկրատական քայլ էր, հասարակությունը գնում էր ժողովրդավարացման, քանի որ եթե ազդարարումն անոնիմ չէ, ապա սկզբունքն ավելի հասկանալի է, հումանիստական է: Առհասարակ, հասարակությանը դժբախտություն է բերում, եթե մեկը նստում գրում է, դրա հիման վրա որոշում է կայացնում, մարդ է դատում: Հիմա նորից սա վերականգնում են»,- ասում է փաստաբանը:

Դատախազությունը կարող է ինքը գրել տա ծանոթներին «անոնիմկան», ինքն էլ հարուցի, մենք ինչպե՞ս պետք է սա ստուգենք: «Չի բացառվում: Այսկերպ տուրք է տրվում անվստահությանը, կասկածների տեղիք է տալիս շրջապատին, ընկերությանը: Հարեւանը հարեւանի դեմ է դուրս գալիս, բարեկամը՝ բարեկամի: Կարճ ասած՝ սա բարոյական չէ եւ անգամ մեկնաբանության ենթակա չէ: Հիշո՞ւմ եք, երթեւեկության հետ կապված, որ ասում էին՝ նկարահանեք, ուղարկեք, որ խախտում թույլ տված վարորդին տուգանենք...»,- արձագանքեց Հովիկ Արսենյանը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ԻՆՁ ՀԵՏ ՄԻՇՏ ՄԱՐԴ ԿԱ, ԻՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է

ՌԵՏ

Կարգալույծ արված 2 հոգեւորականների՝ Ստեփան Ասատրյանի (նախկինում՝ Տեր Արամ) եւ Արամայիս Թախմազյանի (նախկինում՝ Տեր Թադէ)՝ Մայր Աթոռի դեմ հայցադիմումները երեկ դատարանը վերադարձրել է հայցվորներին՝ թերությունների պատճառով: Հայցադիմումները վերադարձնելու որոշումները կայացրել են դատավորներ Սիմա Աբովյանը եւ Պարգեւ Մելքոնյանը: Թերությունները վերացնելու համար եռօրյա ժամկետ է տրամադրվել: Հիշեցնենք, որ նախկին քահանաները ոգեւորվել են Մասյացոտնի թեմի առաջնորդի փորձից եւ պահանջում են դատարանից՝ պարտադրել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին՝ իր որոշումն անվավեր ճանաչել եւ վերականգնել իրենց հովվական պաշտոններում: Զրուցել ենք **Ստեփան Ասատրյանի** հետ:

- Ինչ թերություններ են հայտնաբերվել, որ դատարանը հայցադիմումները հետ է ուղարկել:

- Անկեղծ ասած՝ դեռ տեղյակ չեմ, համացանց չեմ էլ մտնում: Դատարանից զանգ եմ ստացել, բայց դեռ ոչ մի հստակ բան չգիտեմ: Մենք պահանջում ենք մեր գործառույթները վերականգնել:

- Ինչ սպասելիքներ ունեք դատարանից:

- Հույս ունեմ, որ արդարությունը վերականգնվելու է: Դրական, լավ սպասելիքներ ունեմ:

- Մասյացոտնի առաջնորդի պարագայում դատարանը հօգուտ նրա միջանկյալ որոշում կայացրեց՝ պարտադրելով որ նրան վերականգնել պաշտոնում, սակայն թեմի անդամները նրան չեն ընդունում: Մարդիկ նաեւ պնդում են, որ դատարանն իրավունք չունի Եկեղեցու ներքին հարցերին միջամտելու եւ նման վճիռներ կայացնելու:

- Անկեղծ ասած, ես ուսումնասիրում էի կանոնադրությունը, որը տրված է արդարադատության նախարարության կողմից, թե Եկեղեցին ոնց կարող է գործել, ինչ օրենքներով: Այնտեղ կար մի կետ, որտեղ նշված էր, որ երկրի օրենքներին Եկեղեցին կարող է ենթարկվել: Եվ եթե Եկեղեցին ենթարկվում է, ապա այս հարցերում եւս պետք է ենթարկվի դատարանի վճիռներին: Մեր երկրում օրենքից բարձր ոչ մի անձ չպետք է լինի:

- Բայց Դուք գիտեք աշխարհում մի երկիր, որի առաջնորդը Եկեղեցու ներքին հարցերին միջամտի, բացառությամբ կրոնապետությունների, կամ՝ դատարանը Եկեղեցու հետ կապված նման որոշումներ կայացնի:

- Անգլիայում մեր Եկեղեցին ունի թեմ եւ շարժվում է Անգլիայի օրենքներով, կանոններով: Եկեղեցին եւ կրոնական կազմակերպությունները կան բաներ, որոնք անելու իրավունք ունեն, եւ կան բաներ, որոնք անելու իրավունք չունեն, ինչը կարգավորվում է տվյալ երկրի օրենքներով եւ սահմանադրությամբ:

- Բայց ՀՀ սահմանադրությունը հստակ ասում է, որ Եկեղեցին եւ պետությունն իրարից անջատ են, եւ պետությունը չի կարող միջամտել Եկեղեցու ներքին հարցերին: Օրենքին ենթարկվում են բոլորը, այստեղ հարցն այն է, որ Սահմանադրությունը թույլ չի տալիս որեւէ մեկին՝ բացի Եկեղեցու առաջնորդից, թեմի առաջնորդ նշանակել կամ կարգալույծ արվածին վերականգնել:

- Անջատ լինել իրարից՝ ինչ է նշանակում, նշանակում է, որ իրար գործերի մեջ չպետք է խառնվեն, բա եթե չպետք է խառնվեն մեկը մյուսի գործերի մեջ, ես օրենքներից շատ բան չեմ հասկանում, բայց որոշ բաներ տեսել եմ: Պատերազմից հետո՝ ընտրություններից առաջ, կաթողիկոսն ինչու էր վարչապետի հրաժարականը պահանջում: Եթե չպետք է խառնվել, ապա ինչու էր խառնվել:

- Հրաժարականի կոչը խառնվել չէ, դա քաղաքացիական դիրքորոշում է: Բացի այդ՝ Եկեղեցին դատարանով չէր նման որոշում պարտադրում իշխանություններին:

- Բայց այդ դեպքում ինչու էր ասում՝ պետք է հեռանա: «Պետք է»-ն շատ բան է ասում:

- Այժմ ինչով եք զբաղվում Հովհաննավանքում:

- Պատարագներ, պսակադրություն, մկրտություն, ամեն ինչ անցկացնում եմ, ես չեմ դա որոշում, մարդկանց ոչինչ չեմ ստիպում, մարդիկ իրենց կամքով են գալիս ինձ մոտ:

- Ոստիկանները շարունակում են հսկել Ձեզ:

- Այո, անպայման: Իմ անվտանգությունն ապահովելը անհրաժեշտություն է, քանի որ կան մարդիկ, նրանց քանակը մեծ չէ, բայց կան, հիմնականում ընդդիմության ներկայացուցիչներ են, ովքեր ինձ տեսնելով՝ իրենց շատ վատ են դրսեւորում, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ մարդիկ իմ անվտանգությունն ապահովեն:

- Իսկ ինչպե՞ս եք, ասենք, խանութ գնում, գնումներ կատարում, փողոց դուրս գալիս, դժվար չէ՞ վախի մեջ ապրելը:

- Այո, ինձ հետ միշտ մարդ կա: Ոչ միայն ոստիկաններ:

- Էլ ովքե՞ր՝ ԱԱԾ աշխատակիցնե՞ր:

- Դե.... ոչ ամեն պահի՝ երբ ես վտանգ եմ զգում:

- Իսկ Եպիսկոպոսաց ժողովի մասին ի՞նչ կասեք, այն կարո՞ղ է օնլայն տեղի ունենալ:

- Օնլայնը չի կարելի ժողով համարել: Օնլայն ցանկացած որոշում անվավեր է, քանի որ այդ պարագայում ժողովը վերածվում է զուտ խորհրդակցության: Պրակտիկա չկա, երբ Եկեղեցին Վայբերով կամ Տելեգրամով պետք է կառավարել, թեպետ մենք տեսնում ենք, որ կարգալուծությունները Ֆեյսբուքում են հայտարարվում: Այդ ժողովը չպետք է կայանա, որովհետեւ դա խայտառակություն է ՀՀ-ի համար: Ժողովները պետք է միայն Մայր Աթոռում կատարվեն:

- Նիկոլ Փաշինյանն այլեւս Հովհաննավանք չի գալիս՝ պատարագի, ինչու:

- Նա՝ ինքը գիտի. կարող է գալ, կարող է չգալ, ես չեմ զանգելու՝ հարցնեմ: Նա որտեղ ուզում է, գնում է, եթե ուզում է, կարող է գալ մեզ մոտ՝ Հովհաննավանք:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՅՔԱՐՆ ԱՍՏԾՈՒՆ ՉՀԱՎԱՏԱՑՈՂ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ Է՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Հանրային հեռուստաընկերությանը նախօրեին տված հարցազրույցում Նիկոլ Փաշինյանն աղմկահարույց հայտարարություններից կրկին զերծ չմնաց, որոնցից մեկն էլ Եկեղեցու մասին իր խոստովանություններն էին: Թեպետ ի սկզբանե պարզ էր, որ Եկեղեցու դեմ իր սանձազերծած արշավն ունի բացառապես քաղաքական նպատակներ, եւ սկզբում Փաշինյանը բարձրաստիճան հոգեւորականների կուսակրոնության մասին էր խոսում եւ բարեվարքություն պահանջում նրանցից, սակայն ժամանակի ընթացքում նարատիվները փոխվեցին, մեղադրանքները՝ եւս, պայքարի տարբեր նպատակներ հռչակվեցին, ինչ-որ պահից կաթողիկոսին ու նրա եղբորը Ռուսաստանի լրտես ու կագեբեի գործակալ հռչակեցին:

Իսկ երեկվա հարցազրույցում արդեն դեն նետեց պարկեշտության բոլոր դիմակները եւ հստակ հայտարարեց՝ 2020 թվականից ի վեր Հայաստանի գրեթե բոլոր եկեղեցիներում պատարագների ժամանակ հնչում են «քաղաքական ռադիկալ տեքստեր»: Խոսեց Բագրատ սրբազանի նախաձեռնած շարժման մասին, ապա Հայ առաքելական եկեղեցին համեմատեց ծայրահեղական իսլամի դրսեւորումների հետ: «Հույս ունեմ՝ կոռեկտ կհնչի իմ համեմատությունը, բայց աշխարհում, շատ երկրներում կան նաեւ ծայրահեղական իսլամի դրսեւորումներ, որոնց դեմ միջազգային հանրությունը ստիպված է պայքարել»,- հայտարարեց նա:

Զրուցել ենք ՔՊ-ական պատգամավոր **Տրդատ Սարգսյանի** հետ:

- Դուք եկեղեցի գնո՞ւմ եք, երբեւէ ծայրահեղ տեքստեր, քննադատություններ լսե՞լ եք պատարագների ժամանակ:

- Ես գնում եմ եկեղեցիներ եւ նման տեքստեր չեմ լսել, որովհետեւ քրիստոնեությանն առնչվող քահանաների մոտ ենք գնացել պատարագների, որոնցից որ հոգեւորականության զգացողություն ու շունչ է գալիս: Որովհետեւ, երբ պատարագների ենք գնում մասնակցելու, ուզում ենք հոգեւոր խոսք լսել, հենց դա է պատճառը, որ գնացել ենք այն քահանաների մոտ, որոնց ճանաչել ենք:

- Իսկ Դուք ճանաչո՞ւմ եք քահանաների, որոնք իսլամիստներին նմանվող ծայրահեղ դիրքորոշում ունեն իշխանության հանդեպ եւ պատարագների ժամանակ դա արտահայտում են:

- Չեմ ճանաչում, բայց լիքը հոգեւորականների եմ ճանաչում, որ հոգեւորական լինելու իրավունք չունեն, ովքեր չեն հավատում Աստծուն: Բայց, այո, նման դրսեւորումներ էլ կան, եթե չեմ սխալվում՝ ձայնագրություններ կան, տարածվել են:

- Այսինքն, ձեր պայքարը Եկեղեցու դեմ քաղաքական դրդապատճառներով է, որ ձեզ չեն գովում, երբեմն քննադատական խոսք են ասում, որպես ՀՀ քաղաքացի՝ պայքարում են ձեր իշխանության դեմ:

- Մեր պայքարը Հայ առաքելական եկեղեցու դեմ չի, մեր պայքարն Աստծուն չհավատացող հոգեւորականների դեմ է՝ կաթողիկոսի գլխավորությամբ:

- Իսկ այդ ո՞նց եք ճշտել՝ հավատո՞ւմ են, թե՞ չեն հավատում Աստծուն, ո՞վ է հավատում, ո՞վ՝ ոչ:

- Պետք չի ճշտել, պետք է իր գործունեությանը ծանոթանալ եւ ապրած կյանքին:

- Փաշինյանի բարենորոգման ծրագիրը, բայց, այդ մասին չէր, որը, ի դեպ, հանրային լայն աջակցության այդպես էլ չի արժանանում:

- Երբ հեղափոխությունը սկսում էինք, ընթացքում այդ նույն խոսքերն էինք լսում, ինչ ասում եք հիմա, բայց ես վստահեցնում եմ, որ այդ աջակցությունը կլինի: Եվ հետո էլ՝ ի՞նչ աջակցություն եք ուզում, 10 եպիսկոպոս է միացել...

- Հատկապես Կճոյանը շատ հեռու է քաղաքականությունից կամ Վայոց Ձորի թեմի բիզնեսմեն առաջնորդը...

- Ես Վայոց Ձորի թեմի առաջնորդին անձամբ եմ ճանաչում, Եղեգնաձորում բուհ է ունեցել, կարող եմ ասել, որ մարզում աշխատող մարդկանցից շատերն այդ բուհն են ավարտել:

- Ռեստորաններ էլ է հիմնել:

- Կարող է իր ընտանիքին է պատկանում, բայց վատ գործ չի արել, կարծում եմ՝ կան բիզնեսներ, որոնք հենց թեմին են ծառայում:

- Ինչի՞ մասին է խոսքը:

- Բարեգործական ծրագրեր, որոնք թեմի համար են ծախսվում:

- Վեհափառն ինքնակամ չի գնում, ձեր բարենորոգման ծրագիրն էլ մարդիկ չեն ընդունում, ո՞նց եք պատկերացնում հանգուցալուծումը:

- Ընթացքը ցույց կտա. էն, որ Վեհափառը չպիտի շարունակի լինել Վեհափառ, դա անքննելի է: Ինքն արժանի չէ այդ պաշտոնին, որովհետեւ ունի կին ու ընտանիք, կա կանոն, որ նման բան չի կարելի, ինքը խախտել է եւ չի կարող այլեւս լինել կաթողիկոս:

- Դուք էլ կառավարության ձեր ծրագիրը չեք իրականացրել, մինչդեռ օրենքը նման դեպքում հրաժարական է նախատեսում:

- Չկա կառավարություն, որը հարյուր տոկոսով կատարում է:

- Դուք մեծ մասը չեք կատարել:

- Ժողովուրդը կգնահատի՝ մենք մեր ծրագրերը կատարո՞ւմ ենք, թե՞ ոչ, ընտրություններին կտեսնենք:

- Ժողովուրդն իր վերաբերմունքն արտահայտում է Եկեղեցու վերաբերյալ ձեր ծրագրերին, Փաշինյանի մասնակցությամբ պատարագներին նույն դեմքերն են, թիվն էլ չի ավելանում:

- Ես Ձեր գնահատականը չեմ կիսում, կարող է՝ շատերը չեն գնում պատարագ, բայց երբ պահը գա՝ իրենց խոսքն ասելու, կասեն:

- Ե՞րբ է պահը գալու:

- Կգա՝ կտեսնեք:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԿՈՎԿԱՍ

ՓԱՇԻՆՅԱՆԻ, ԱԼԻԵՎԻ ԵՎ ՓԱՇԱԶԱԴԵԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՂՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս օրերին Հարավային Կովկասում գլխավոր իրադարձությունն ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի այցն էր Հայաստան եւ Ադրբեջան: Հայաստանում, ինչպեսեւ սպասելի էր, բանակցություններ-հայտարարությունների թեմատիկան 2025-ի օգոստոսին Վաշինգտոնում ՀՀ եւ ԱՄՆ կառավարությունների միջեւ ստորագրված 3 Փոխըմբռնման հուշագրերն էին՝ 1. «Խաղաղության խաչմերուկներ» ծրագրի շրջանակում կարողությունների զարգացման վերաբերյալ (MOU on Partnership in the Field of Capacity Development of the “Crossroads of Peace” Project), 2. Արհեստական բանականության եւ կիսահաղորդիչների ոլորտում նորարարական համագործակցության վերաբերյալ (MOU on Innovative Partnership in the Field of Artificial Intelligence and Semiconductors), 3. Էներգետիկ անվտանգության ոլորտում գործընկերության վերաբերյալ (MOU on Partnership in the Field of Energy Security): Գոնե հասարակությանը հասանելի հատվածում ողջ խոսակցությունն այս 3 թեմայի շուրջ էր, 2025-ի օգոստոսից ի վեր դրանց ուղղությամբ արված քայլերի, ուրվագծված ծրագրերի:

Առավելապես էներգետիկ անվտանգության ոլորտը շեշտվեց, քանի որ Հայաստանը եւ ԱՄՆ-ն համատեղ հայտարարություն ստորագրեցին՝ Միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման շուրջ բանակցություններն ավարտելու մասին, ԱՄՆ փոխնախագահն էլ հումորով նկատեց, թե իրենք այնքան արագ են փոխըմբռնման եւ համաձայնության հասել, որ աշխատանքային խմբերին առանձնապես գործ չի մնացել: Հայաստանում կիսահաղորդիչների արտադրության ուղղությամբ ներդրումների, ծրագրերի մասին խոսակցություն եղավ, մեկ-երկու անգամ էլ TRIPP-ը հիշատակվեց՝ առանց որեւէ կոնկրետության:

Ամփոփ տպավորությունն այն էր, որ ԱՄՆ-ի եւ Հայաստանի միջեւ համագործակցություն է զարգանում միջուկային էներգիայի, կիսահաղորդիչների, գաղտնիության կնիք կրող եւ հազվագյուտ երկրների հասանելի արտադրությունների ու տեխնոլոգիաների ոլորտներում, եւ դա հրաշալի մանիֆեստացիա էր՝ ի գիտություն Հայաստանի հարեւանների: Սակայն Ջեյ Դի Վենսի այցի մեծագույն արժեքը այցն էր ինքնին՝ անկախ բանակցվող թեմաներից: ԱՄՆ փոխնախագահին ընտանյոք ժամանում է Հայաստան, այն էլ՝ պաշտոնական այցով, երբ ոչ միայն նախկին ԽՍՀՄ-ում, այլեւ Եվրոպայում եւ Մերձավոր Արեւելքում էլ հազիվ 3-4 երկիր գտնվի, որ Թրամփի պաշտոնավարման ընթացքում Ուիթկոֆ-Քուշներից բացի ԱՄՆ որեւէ բարձրաստիճան պաշտոնյայի հյուրընկալած լինեն: Վենսի այցի օպտիկան արդեն ցույց է տալիս, թե ԱՄՆ-ն որքան է կարեւորում Հայաստանում հաստատվելու օրակարգը:

Եվ այստեղ Փաշինյանի՝ իբր Վենսին շնորհակալություն հայտնելու կապակցությամբ իրեն մեջտեղ բերելը, հեքիաթներ պատմելը, թե անցյալ տարի Աղոթքի նախաճաշի առթիվ իր այցը Վաշինգտոն, Վենսի հետ Սպիտակ տան միջանցքում ոտքի վրա լուսանկարվելը դեր են կատարել, որ ԱՄՆ-ն զբաղվի Հայաստանով, եւ այս արդյունքները լինեն, միայն քմծիծաղ է հարուցում: Այս՝ ամնեզիայով տառապողը երեւի մոռացել է, որ անցյալ տարի Վենսի հետ լուսանկարը միայն ինքն էր հրապարակել, Վենսն անգամ իր սոցիալական օգտահաշիվներում բառ չէր գրել Փաշինյանի հետ հանդիպում կամ խոսակցություն ունենալու մասին: Դրանից հետո՝ մինչեւ օգոստոս, Վաշինգտոնը որեւէ անգամ ցույց էլ չի տվել, թե գիտի Փաշինյանի գոյության մասին: Այն քայլերը, որ ԱՄՆ հաջորդական վարչակազմերը 2022-ից, հատկապես 2024-ից ի վեր կատարում են Հայաստանի առնչությամբ, հազիվ թե Փաշինյանի հասկացողության սահմաններում են, եւ Փաշինյանի էժանագին մանիպուլյացիաները, թե իբր ինքն է այդ գործընթացների կենտրոնում եւ նույնիսկ՝ ուղղորդում, միայն ծիծաղ են առաջացնում:

Նույնպիսի ձեռնածություններով է զբաղված նաեւ Ադրբեջանը, որն իրականում կցորդ է ԱՄՆ-ի՝ Հայաստանում հաստատվելու հարցում: Պատահական չէ, որ Հայաստանի ետեւից քայլելը եւ Հայաստանից մեկ տարի հետո ԱՄՆ-ի հետ Ռազմավարական համագործակցության համաձայնագիր ստորագրելն Ալիեւը գնահատում է որպես իր մեծագույն ձեռքբերումը: ԱՄՆ փոխնախագահն էլ Բաքվում ոչ մի ավել արժեքավոր իրողություն չգտավ՝ Ադրբեջանին դրվատելու համար, քան պատմելը, թե ինքնաթիռում իր աշխատակիցներին ասել է, որ Թրամփից բացի Իլհամ Ալիեւը երեւի միակ առաջնորդն է աշխարհում, որ իսկապես լավ հարաբերություններ ունի թե՛ Իսրայելի, թե՛ Թուրքիայի հետ: «Ես ասացի՝ դա երկու բացատրություն կարող է ունենալ. կամ ադրբեջանական խոհանոցն է երեւի իսկապես համեղ, կամ Ալիեւն է շատ հմայիչ անձնավորություն»: Վենսի ծիծաղն էլ եկավ իր ասածից, Ալիեւն էլ ծիծաղեց, ներկաներն էլ:

Սակայն Վենսի սրամտությունից ավելի ծիծաղելի էր Ալիեւի հերթական քարոզչական փուչիկը: Ինչպես օկուպացված Շուշիում Ադրբեջանն իբր լրագրողական միջազգային փառատոներ է կազմակերպում, որոնց Թուրքիա, Ադրբեջան, Պակիստան, եւս մի երկու թյուրքալեզու երկրից բացի այլ մասնակիցներ չեն գտնվում, հիմա էլ Ալիեւի երեւակայությունը նոր փարսի էր բավարարել: Քանի որ ԱՄՆ-ն Հայաստանի հետ AI-ի, կիսահաղորդիչների ոլորտում համագործակցության հուշագիր է ստորագրել, Վենսի այցի շրջանակում ԱՄՆ պաշտոնյաների, ընկերությունների մասնակցությամբ Երեւանում համաժողով էր գումարվում, Ալիեւն էլ իր կարողացածն է արել: ԱՄՆ Առեւտրի պալատի միջազգային բաժանմունքի՝ Թուրքիա, Մերձավոր Արեւելք, Միջին Ասիայի պատասխանատուի (Kush Choksy) գլխավորությամբ, արեւմտյան ընկերությունների ներկայացուցիչների է հրավիրել Բաքու (մեծ հավանականությամբ՝ այդ ընկերությունների մերձավորարեւելյան ստորաբաժանումներից) եւ առանց անհարմար զգալու՝ լրատվամիջոցներով տարածել, թե Apple-ի, ExxonMobil-ի, JP Morgan-ի եւ այլ աշխարհահռչակ ընկերությունների ղեկավարները պատվիրակությամբ այցելել են Բաքու: Ի սեր Աստծո... Apple, ExxonMobil, JP Morgan եւ մյուս ընկերությունների ղեկավարները միայն ԱՄՆ նախագահների ղեկավարած պատվիրակությունների կազմում են երբեմն ինչ-որ երկիր գնում: Եվ նման մարդիկ հաստատ քաղաքակրթությունից լուսնային հեռավորության վրա գտնվող, նավթի ու ցեխի միջեւ տարուբերվող ադրբեջաններ չեն գնում: Ներքին լսարանի համար փարսերը գոնե միայն ադրբեջաներեն տարածեն...

Իսկ խեղկատակության առաջին հորիզոնականն իրավամբ պատկանում է ոչ թե Ադրբեջանի աշխարհիկ իշխանությանը, այլ հոգեւոր առաջնորդին՝ Փաշազադեին: Այս անձն ինչ-որ տարօրինակ մտասեւեռում ունի՝ ցույց տալու, թե ինքը հանդիպում է Հռոմի պապին: Աշնանը Սուրբ Պետրոսի տաճարի հրապարակում անցկացված մի էկումենիկ միջոցառման ժամանակ, հարյուրավոր այլ մասնակիցների նման, նա մոտեցել էր Հռոմի պապին եւ դրսում ձեռքսեղմումը ներկայացրել էր որպես Պապի հետ հանդիպում: Պարզ էր, որ Վատիկանը բառ անգամ չէր գրել նման հանդիպման մասին: Երեկ նորից ադրբեջանական լրատվամիջոցները գրել էին, Հայաստանում էլ արտատպել էին, թե փետրվարի 9-ին Փաշազադեն հանդիպել է Հռոմի Լեւոն XIV պապին: Նայեցի թե՛ Սուրբ Աթոռի (vatican.va), թե՛ Vatican News-ի լրահոսերը, ընդ որում՝ ոչ միայն փետրվարի 9-ի, այլեւ նախորդ, հաջորդ օրերի՝ 7, 8, 9, 10. Փաշազադեի հետ Հռոմի պապի հանդիպման մասին չկա ոչ մի բառ կամ տառ: Բնականաբար, հետաքրքրեց՝ այդ դեպքում որտեղի՞ց է լուրը: Պարզվեց, որ գոյություն ունեն Caucasus Muslim Board կոչվող կազմակերպություն եւ կայք, որտեղ փետրվարի 10-ին հրապարակվել է մի քանի լուսանկար, որոնցում Փաշազադեն եւ մի քանի այլ հոգեւորականներ (արտահագուստից դատելով՝ տարբեր դավանանքների), նաեւ՝ աշխարհիկ անձինք, խմբակային լուսանկարվել են Պապի հետ, մի ուրիշ լուսանկարում նվերներ են հանձնում Պապին, մի երրորդ լուսանկարում՝ այլ սրահում կարդինալների հետ սեղանի շուրջ զրուցում են: Ընդսմին, լուսանկարներին ուղեկցող ոչ մի բառ գոյություն չունի: Թե ադրբեջանական լրատվամիջոցները որտեղից են ամբողջ տեքստը հորինել, մանրամասներ հաղորդել, Աստված գիտի...

Էականը՝ որ Վատիկանը, Սուրբ Աթոռը կրկին անտեսել է Ադրբեջանի հոգեւոր առաջնորդին եւ բառ անգամ չի հրապարակել Պապի հետ նրա հանդիպման մասին: Եվ դա՝ այն պարագայում, երբ փետրվարի 9-ին Պապի մոտ ընդունելության եղած յոթ պատվիրակությունների եւ անձանց մասին է հաղորդվել, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տնօրենի: Մինչդեռ Փաշազադեի եւ իր անտուրաժի մասին ոչ մի հիշատակում: Փաշազադեին մնում է «Կրկին փորձիր» տարբերակը, ինչպես Coca-Cola-ի գովազդում:

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԻՆՉՈ՞Ւ ՍՊԱՍԵԼ, ՈՐ ԱՂՆ ՈՒ ԱՎԱԶՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՆ ԱՆԵՆ

Բնակավայրերի փողոցներն ու մայթերը վերջապես սկսում են ազատվել ձյան ու սառույցի կուտակումներից: Տարբեր գուներանգներ ստացած աղախառն ավազը կամաց տարրալուծվում է, փոխակերպվում: Աղը լուծվելով ջրի մեջ՝ հեռացել է ջրատար համակարգերով, իսկ ավազը մնացել է փողոցներում ու մայթերին: Թվում է՝ մեծ խնդիր չէ: Սակայն ավազը, բացի նրանից, որ խորթ է բնակավայրերի գեղագիտական տեսքին եւ անհարմարություններ է ստեղծում հետիոտնի համար, վնասում է կոշիկների ներբանները, մեքենաների անվադողերը: Ավազը չի հալվում, չի քայքայվում եւ չի անհետանում արեւի ու անձրեւի ազդեցությամբ: Այն ջրի հետ ներթափանցում է ջրահեռացման համակարգեր, կուտակվում, խցանումներ ստեղծում: Իսկ դրանց վերացումը պահանջում է ժամանակ, տեխնիկական միջոցներ, աշխատուժ եւ լրացուցիչ ֆինանսական ծախսեր:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ խնդիրը թողնել, որ բարդանա, ինչո՞ւ սպասել, որ ավազն իր «սեւ գործն» անարգել կատարի, անհրաժեշտ է ժամանակին մաքրել այն: Եվ ավազը մաքրել- հավաքելն ակնհայտորեն ավելի քիչ ծախսատար է, քան հետագայում ջրահեռացման համակարգերի մաքրումն ու վերականգնումը: Թերեւս փոքր խնդիր է, սակայն հենց այդ պատճառով էլ լուծելի է՝ արագ եւ առանց մեծ ջանքերի: Կոչը հասցեագրված է համայնքապետարաններին, որոնք պետք է ժամանակին նկատեն խնդիրը եւ լուծեն, քանի դեռ փոքր անհարմարությունը չի վերածվել խոշոր ծախսի ու մեծ հիմնահարցի:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ, ԱՅՍ ԱՆԳԱՄ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Փաշինյանը փաստացի պատերազմ է հայտարարել Ռուսաստանին, բայց ասում է, որ մտադիր չէ պատերազմել Ռուսաստանի դեմ: Դա ասում է, որովհետեւ իր նպատակն է՝ ցույց տալ, թե ինքը Հայաստանի համար խաղաղության դարաշրջան է բացում, իրականում Հայաստանը ներքաշում է Արեւմուտք-Ռուսաստան հակամարտության կամ պատերազմի մեջ, Հայաստանը հանդես է գալու որպես Արեւմուտքի դաշնակից եւ Ռուսաստանի թշնամի: Թրամփի ուղին Ռուսաստանի դեմ թշնամության ակտ է, գոնե Ռուսաստանը դա այդպես է ընկալում:

«Հանրային» կոչվող հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Փաշինյանն անոնսավորում է Ռուսաստանից հայկական երկաթգծի հավատարմագրային կառավարումը խլելու իր իշխանության մտադրությունը: Ըստ նրա, Հայաստանի երկաթուղին կառավարող ռուսական ընկերությունը փաստացի չի կատարում իր պարտավորությունները, չի կատարում իր կողմից հրապարակային տրված հրահանգները՝ չի կառուցում Երասխից մինչեւ Նախիջեւանի սահման եւ Ախուրիկից մինչեւ Թուրքիայի սահման երկաթգծի բացակայող հատվածները: «Շատ հարգանքով մեր ռուսաստանյան գործընկերներին, բայց փաստն այն է, որ միջազգային լարված համատեքստի պատճառով, այն փաստի բերումով, որ մեր երկաթուղին, որը մեր սեփականն է, գտնվում է ՌԴ կառավարման ներքո, մենք այստեղ մեր մրցակցային առավելությունը կորցնում ենք: Մենք այստեղ պետք է մտածենք, թե ինչ պետք է անենք: Սա 1-2 տարվա հարց չի: Մենք պետք է լուծում գտնենք եւ դա պետք է գտնենք բարեկամական, եղբայրական, ընկերական տրամաբանության մեջ»,- ասում է Փաշինյանը՝ ընդգծելով, որ Ռուսաստանը կարող է հրաժարվել կառուցել նաեւ Մեղրիով անցնող, այսպես կոչված, Թրամփի ուղու երկաթուղին կամ կարող է չհրաժարվել, բայց ձգձգել, եւ այդ դեպքում եւս պետք է որոշում կայացվի:

Փաշինյանը, ըստ էության, պատասխանեց Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Միխայիլ Գալուզինի՝ մեկ օր առաջ արված հայտարարությանը, որ Թրամփի ուղու կառուցումը պետք է համաձայնեցվի Ռուսաստանի հետ, քանի որ մինչեւ 2038 թվականը Հայաստանի երկաթուղային ցանցը գտնվում է «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի դուստր ձեռնարկության կառավարման ներքո, երկրում օգտագործվում է ռուսական լայնության երկաթգիծ, Իրանի հետ սահմանին տեղակայված են ռուս սահմանապահներ, եւ պետք է հաշվի առնել Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին: Հայաստանի իշխանության ներկայացուցիչներն ասում են, որ իրենք էլ չեն պատկերացնում, թե ինչպես պետք է Ռուսաստանը մասնակցի հայ-ամերիկյան այդ նախագծին, կամ՝ ինչու այն պետք է համաձայնեցվի Ռուսաստանի հետ:

Նիկոլ Փաշինյանի ասած լուծումը կարող է լինել միայն մեկը՝ խզել կոնցեսիոն կառավարման մասին պայմանագիրը եւ Հայաստանի երկաթուղու կառավարումը վերցնել «Ռուսական երկաթուղիներ» ընկերության «Հարավկովկասյան երկաթուղիներ» դուստր ձեռնարկությունից: Իհարկե, Փաշինյանը դա անելու է եղբայրաբար, բարեկամաբար, ընկերաբար: Այնպես, ինչպես ՀԷՑ-ը խլեց Ռուսաստանի քաղաքացի Սամվել Կարապետյանից եւ հանձնեց իր ենթակայի կառավարմանը: Թե հերթական եղբայրական ու բարեկամական ակտի արդյունքում ով կհայտնվի կալանավայրում, դժվար է ասել:

«Մենք Ռուսաստանի հետ չենք կռվելու: Ես շատ ուղիղ ու ջերմ հարաբերություններ ունեմ Պուտինի եւ Միշուստինի հետ, սա մեր ռազմավարությունն է, մենք չենք գործելու Ռուսաստանի դեմ, բայց միշտ գործելու ենք Հայաստանի Հանրապետության շահերին համապատասխան: Այստեղ կարող են հատումներ լինել, սակայն չենք կարող ասել, որ մենք ի հեճուկս Հայաստանի գործելու ենք Ռուսաստանի կամ որեւէ այլ երկրի շահի համար»,- նույն հարցազրույցի ժամանակ ասում է Փաշինյանը: Իրականությունն այն է, որ Փաշինյանի իշխանությունը ներքաշել է Հայաստանը Ռուսաստանի դեմ թշնամական ծրագրի մեջ, «Թրամփի ուղի» կոչվածը հակառուսական եւ հակաիրանական, ինչ-որ իմաստով՝ նաեւ հակաչինական նախագիծ է: Դրա ամբողջ իմաստը Կենտրոնական Ասիայի հանքահումքային ռեսուրսների մատակարարումն է Եվրոպա՝ ամերիկյան վերահսկողության տակ, Ռուսաստանը շրջանցելով: Սա Ռուսաստանին շրջափակելու, մեկուսացնելու նախագիծ է, իսկ ցանկացած շրջափակում, բլոկադա ոչ այլ ինչ է, քան կռիվ եւ պատերազմ: Այնպես որ, երբ Փաշինյանը հայտարարում է, որ չի կռվելու Ռուսաստանի դեմ, հերթական անգամ ստում է, ինքն արդեն Հայաստանը ներքաշել է Ռուսաստանի դեմ կռվի մեջ: Ամերիկյան սպառազինություններն էլ, որոնք մատակարարվում են Հայաստանին, ուղղված են հենց այդ նպատակին, Ռուսաստանի դեմ կռիվը սպասարկելուն: Դեռեւս 2022 թվականին եմ գրել, որ Արեւմուտքը սպառազինություն է մատակարարում Հայաստանին, ոչ թե Թուրքիայից կամ Ադրբեջանից պաշտպանվելու, այլ՝ Ռուսաստանի դեմ առճակատման դեպքում օգտագործելու համար: Նույնը՝ նաեւ Ադրբեջանի դեպքում:

Ինչ վերաբերում է ԵԱՏՄ անդամակցությանը, ապա այս պահին Հայաստանը դեռ պատրաստ չէ խզել հարաբերություններն այդ կառույցի հետ: Երեկ հենց այդ մասին հայտարարելու նպատակով՝ ռուսներին պատասխանելու համար, ասուլիս էր կազմակերպել ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը, որը հայտարարեց, որ Թրամփի ուղու դեպքում մաքսային ծառայություն գործելու է, եւ քանի որ Հայաստանը ԵԱՏՄ անդամ է, ապա այս դեպքում գործելու է միության ամբողջ իրավական համակարգը: Չնայած, եթե ամերիկացիները հրահանգեն, ապա Հայաստանը կարող է դուրս գալ նաեւ այդ միությունից:

Մնում է ռուս սահմանապահների հարցը, բայց դա եւս լուծելի խնդիր է. Հայաստանի իշխանությունները կարող են պահանջել, որ Ռուսաստանի սահմանապահ զորքերը դադարեցնեն ծառայությունը հայ-իրանական եւ հայ-թուրքական սահմանին, մանավանդ որ Թուրքիայի հետ սահմանը բացվելու ինչ-որ հեռանկար կա: Ռուսաստանն ասում է, որ Հայաստանի վրա ազդելու երեք լծակ ունի՝ իր դեմ ուղղված Թրամփի ուղու շահագործումը կասեցնելու, թույլ չտալու համար: Փաշինյանն ասում է, որ այդ երեք լծակն էլ կարող են չեզոքացվել, ինքը Ռուսաստանի դեմ կռիվ չի ուզում, բայց եթե նրանք ուզում են, նաեւ դրան է պատրաստ: Այնպես որ, երբ Փաշինյանն ասում է՝ խաղաղության դարաշրջան, պատրաստվեք էլ ավելի մեծ առճակատման ու պատերազմի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ՝ ՀԱՋՈՐԴ ԴԱՍԻՆ

Վենսի այցի շուրջ բարձրացած աղմուկը խանգարեց լսել ու վերլուծել Գագիկ Ծառուկյանի հայտարարությունը՝ ընտրություններին մասնակցելու եւ մասնակցության ձեւաչափի մասին: Իվետա Տոնոյանի պարզաբանումներից հետո միայն հասկացանք, որ Գագիկ Ծառուկյանը ԱԺ ընտրություններին մասնակցելու է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունով, այլ կուսակցությունների հետ դաշինք չի կազմելու, ինքն էլ, հնարավոր է, առաջին համարը չլինի: Իսկ մինչ այս պարզաբանումը Գագիկ Ծառուկյանը հայտարարել էր, որ ստեղծում է մի յուրահատուկ Նոյան տապան, որտեղ հավաքելու է մեր ազգի առողջ ներուժը, որ փրկի Հայաստանը: Ընդ որում՝ ընտրությունը խիստ է լինելու՝ ասել է Գագիկ Ծառուկյանը: Ով եկավ մանդատի ու պաշտոնի ակնկալիքով, «տապան» չի մտնելու: Հարց է առաջանում՝ պարոն Ծառուկյան, իսկ ինչպե՞ս պիտի մեր մտավոր ու առողջ ներուժը փրկի, վերականգնի, զարգացնի ու բարգավաճեցնի Հայաստանը, եթե պատգամավոր, վարչապետ կամ նախարար չլինի: Մերկ ձեռքերո՞վ… Գործիքներ են, չէ՞, պետք: Իսկ պետությունները ղեկավարելու ավելի լավ գործիքներ, քան մանդատն ու պաշտոնն են, մարդկությունը մինչ օրս չի ստեղծել:

Այսուհանդերձ՝ շատ ռոմանտիկ է հնչում. նստում ենք Գագիկ Ծառուկյանի «տապանն» ու բոլորով փրկվում… Չուզողը ես լինեմ: Այնքան եմ հոգնել քաղաքականությունից ու քաղաքական խարդավանքներից, որ էլ չասելու: Բա 8 տարի անընդմեջ ապրես ստի, կեղծիքի, դավաճանության, մարդկային ամենավերջին այլանդակությունների մեջ ու չզմայլվե՞ս Նոյի տապանի գաղափարով… Մուտքը տոմսով չի, չէ՞, պարոն Ծառուկյան… Ձմե՛ն… Ինձ ո՛չ մանդատ է պետք, ո՛չ պաշտոն, փոխարենը՝ ապագա Հայաստանի լավ տեսլական ունեմ, որ սիրով կփոխանցեմ ուրիշներին՝ ապագա մանդատավորներին եւ պաշտոնավորներին: Բայց այստեղ, պարոն Ծառուկյան, մեր, այսինքն՝ Ձեր «տապանը» դեմ է առնում քաղաքականության պատին: Ի՞նչ ենք անելու «ջրհեղեղից» հետո, երբ աղավնին վերադառնա ձիթենու ճյուղով: Առասպելն ասում է՝ այդ ժամանակ Նոյն իր որդիներով ու կենդանիներով դուրս եկավ տապանից, Արարատի լանջով իջավ ստորոտը, կենդանիներ զոհաբերեց Աստծուն, ապա սկսեց զբաղվել գինեգործությամբ ու հացահատիկի մշակությամբ: Նա պատգամավորներ ու նախարարներ չնշանակեց, որովհետեւ պետություն չկար, հետեւաբար՝ նաեւ պետություն ղեկավարելու անհրաժեշտություն: Ու պատահական չէ, որ Նոյին անվանեցին նահապետ եւ ոչ թե վարչապետ:

Մի կարեւոր հարց էլ կա, պարոն Ծառուկյան: Մենք որ այսքանով լցվել ենք տապանը, գոնե պետք է իմանանք, թե ով է այդ տապանը կառուցել, այլ խոսքով՝ ով է այդ տապանի Նոյը: Գիտե՞ք, ինձ հետ ժամանակին մի շատ զվարճալի դեպք է պատահել, եւ ես չէի ցանկանա երկրորդ անգամ ընկնել այդ վիճակի մեջ: Ուրեմն մի անգամ Գյումրիից Երեւան էի թռչում… Երբ ինքնաթիռն արդեն օդում էր, բորտուղեկցորդուհին մտավ սրահ, ողջունեց մեզ եւ ճերմակ ատամները բացելով՝ հայտարարեց.

- Սիրելի ուղեւորներ, շնորհավորում եմ ձեզ՝ այս փորձնական չվերթի մասնակիցը լինելու կապակցությամբ: Մեր ինքնաթիռը վարում է Նիկի անունով շիմպանզեն…

Ինքնաթիռում, բնականաբար, իրարանցում սկսվեց՝ ո՞նց թե շիմպանզեն, ինչո՞ւ նախապես չէիք զգուշացրել, ձեզ ո՞վ է իրավունք տվել խաղալ մեր կյանքի հետ… Մարդիկ եղան, որ այսուայնկողմ սկսեցին վազել, պարաշյուտ պահանջել, գոռգոռալ: Ինձ հետ նույն շարքում մի ՔՊ-շնիկ էր նստած: Սա հոնքն էլ չշարժեց բորտուղեկցորդուհու հայտարարությունից:

- Ձեզ այս ամենը չի՞ անհանգստացնում,- հարցրի նրան:

- Ոչ,- պատասխանեց անխռով:

- Ինքնաթիռը կապիկն է վարում… Հասկանո՞ւմ եք, թե դա ինչով կարող է վերջանալ:

Ձեռքը թափ տվեց.

- Էէէ, Ռոմանոսը գետնի վրա ՀԷՑ է ղեկավարում՝ չեմ վախենում, հիմա որ կապիկն ինքնաթիռ է ղեկավարում, պիտի վախենամ…

Մեր երկրի ինքնաթիռն արդեն 7-8 տարի՝ ինչ կենդանի ասես վարում է՝ սովոր ենք, բայց, պարոն Ծառուկյան, արդեն ժամանակն է, որ իմանանք, թե ով է ղեկավարելու մեր, այսինքն՝ Ձեր «տապանը»: Իվետա Տոնոյանն ասում է՝ հնարավոր է դուք չլինեք առաջին համարը: Իսկ ո՞վ, եթե ոչ Դուք… Եվ ես, դեռ «տապան» չմտած, իրավունք ունեմ կասկածելու՝ արդյոք այդ փոխադրամիջոցն ինձ հեռու կտանի՞ քաղաքականությունից, կփրկի՞ ստի ու կեղծիքի այս իրականությունից:

ՀԳ. *Կմերժե՞ն, արդյոք, «տապանի» ուղեւորներն այս իշխանություններին: Այդ մասին՝ հաջորդ դասին:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԿԱՍԿԱԾՆԵՐ, ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԲԱՑԱՀԱՅՏ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

ՍՅՑ

ԱՄՆ փոխնախագահի՝ Երեւան կատարած առաջին այցը մեծ իրարանցում է առաջացրել ոչ միայն բուն Հայաստանում, այլեւ դրա սահմաններից դուրս: Նախ, ատոմային էներգիայի ոլորտում հայ-ամերիկյան հնարավոր համագործակցության եւ մոդուլային կայաններ կառուցելու մասին լուրը խանդով ու կոնկրետ ուղերձով ընդունեց Մոսկվան: Ռուսական «Ռոսատոմ» պետական կորպորացիան հնարավորինս կարճ ժամկետներում կիրականացնի Հայաստանում ատոմակայանի

Արա ԱԼՈՅԱՆ

կառուցման նախագիծը՝ «Իզվեստիա» թերթին ասել է ՌԴ արտաքին գործերի նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը. ««Ռոսատոմ»-ը պատրաստ է կարճ ժամկետներում սկսել նախագծի իրականացումը՝ իհարկե, հաշվի առնելով մեր հայ գործընկերների ցանկություններն ու մոտեցումները: Վստահելի, արդեն փորձարկված տեխնոլոգիաների առկայության, ինչպես նաեւ՝ ֆինանսական գրավչության տեսանկյունից, ներառյալ շինարարությունը, հետագա շահագործումը, մասնագետների պատրաստման եւ վերապատրաստման անհրաժեշտության հետ կապված իրական այլընտրանքներ չկան»:

ԱՄՆ հաջորդ նախագահի թեկնածու համարվող Ջեյ Դի Վենսի այցը նշանավորվեց նաեւ նախընտրական շրջանում Փաշինյանին բացեիբաց աջակցություն հայտնելով, որը թերեւս Վաշինգտոնի ներկայացուցիչների հայաստանյան ուղեւորության եթե ոչ հայտարարված պաշտոնական, ապա գոնե «քաղաքական բոնուս-անակնկալ» օրակարգից էր: Այցը, սակայն, կիքսերից զերծ չէր. ԱՄՆ թիվ երկրորդ պաշտոնյան կնոջ հետ Ծիծեռնակաբերդ այցելելուց հետո գրառում էր արել այդ մասին՝ նշելով Հայոց ցեղասպանություն եզրը, ապա ջնջել էր այն: CNN-ն ու ANCA-ն արդեն անդրադարձել են այդ աղմկահարույց դիպվածին՝ այն որակելով իբրեւ ժխտողական քայլ, Թուրքիային ուղղված սիրաշահություն եւ այլն՝ այն դեպքում, երբ ԱՄՆ մի քանի նահանգ, Սենատն ու այլ կառույցներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: ԱՄՆ փոխնախագահի առաջին այցը Հայաստան ամրապնդեց Երեւանի արագ մերձեցումը Վաշինգտոնի հետ եւ Մոսկվայից նրա հեռացումը: Երեւանում Ջեյ Դի Վենսն աջակցեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի թեկնածությանը հունիսին կայանալիք ընտրություններում:

Նա նաեւ հայտարարեց, որ հայկական բանակը կստանա հետախուզական անօդաչու թռչող սարքեր, որոնք մատակարարվում են նաեւ Ուկրաինային. այս մասին գրում է BBC-ի ռուսական ծառայությունը: Հոդվածում մեջբերվում են Վենսի եւ Փաշինյանի համատեղ ասուլիսում ԱՄՆ փոխնախագահի հնչեցրած խոսքերը. «Հարցն այն է, թե ինչպես խաղաղության համաձայնագիրը բարեհաջող հասցնել հաջորդ փուլ, ինչպես վարչապետին պահել լավ վիճակում, որպեսզի նա կարողանա կենտրոնանալ ապագայի վրա: Գիտեմ, որ ընտրություններ են մոտենում, ես չեմ խոսի դրա մասին: Բայց եթե իմ աջակցությունը որեւէ նշանակություն ունի, ապա նա, անկասկած, ունի այդ աջակցությունը, քանի որ նա այն մարդն է, որը կարող է երկարաժամկետ գործընկերություն կառուցել՝ նման ծրագրերը հաջողությամբ իրականացնելու համար»: Հանդիպման ժամանակ հայտարարվեց նաեւ միջուկային էներգիայի ոլորտում համագործակցության համաձայնագրի մասին: Սա ճանապարհ կհարթի ԱՄՆ-ից միջուկային տեխնոլոգիաների արտահանման եւ Հայաստանում ամերիկյան փոքր միջուկային ռեակտորների կառուցման համար՝ գրում է հոդվածագիրը: «Սակայն ամենակարեւոր նորությունը վերաբերում էր հայոց բանակին ամերիկյան V-Bat հետախուզական անօդաչու թռչող սարքերի մատակարարմանը, որի արժեքը կազմում է 11 միլիոն դոլար: Սա առաջին ամերիկյան ռազմական տեխնիկան է, որը մատակարարվել է Հայաստանին, մի երկրի, որը պաշտոնապես մնում է Ռուսաստանի դաշնակիցը, բայց վայելում է ԱՄՆ-ի ռազմավարական գործընկերոջ կարգավիճակը եւ ձգտում է անդամակցել Եվրամիությանը: Վենսը եւ Փաշինյանը քննարկել են նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացը, որի չլուծված հարցերից մեկը մնում է Բաքվում բանտարկված հայ քաղաքացիների ճակատագիրը»,- գրում է BBC-ն: Հրապարակման մեջ նշվում է, որ Վենսի ուղեւորության հաջորդ կանգառը Բաքուն է, Հայաստանից մեկնելիս նա ասել է, որ նախատեսում է Ադրբեջանի ղեկավարության հետ քննարկել հայ բանտարկյալների հարցը: BBC-ի փոխանցմամբ, Վենսի աջակցությունը Փաշինյանին նշանակում է, որ Արեւմուտքն ունի միասնական թեկնածու՝ Հայաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների համար, չնայած Թրամփի վարչակազմի եւ եվրոպացի առաջնորդների միջեւ բազմաթիվ այլ հարցերի շուրջ առկա տարաձայնություններին:

«Եվրոպական Միության առաջնորդները նույնպես աջակցում են Փաշինյանին, իսկ դեկտեմբերին Հայաստանը ստացավ ԵՄ դրամաշնորհ՝ ապատեղեկատվության դեմ պայքարելու համար, ինչը փաստացի նշանակում է աջակցություն ներկայիս կառավարությանը»,- նշել է Հարավային Կովկասի հարցերով Crisis Group-ի («Ճգնաժամային խմբի») ավագ վերլուծաբան Ջոշուա Կուչերան: Նրա կարծիքով, Հայաստանի իշխանություններն անընդհատ խոսում են հայկական քաղաքականությանը Ռուսաստանի միջամտության մասին, բայց Եվրոպան եւ Ամերիկան նույնպես բացահայտորեն խոսում են իրենց նախասիրությունների մասին: «Ռուսական գործունեության մասին կան միայն անուղղակի ապացույցներ, մինչդեռ ԵՄ-ն եւ ԱՄՆ-ն բացահայտորեն միջամտում են»,- նշել է փորձագետը: Վերլուծաբանը նաեւ նշել է, որ եւ ԵՄ-ն, եւ Վենսը Փաշինյանի պաշտոնավարումն ուղղակիորեն կապում են Ադրբեջանի հետ խաղաղության գործընթացում առաջընթացի հետ. «Սա նշանակում է, որ խաղաղության գործընթացը կապվում է կոնկրետ անհատների հետ, ինչը չի նպաստում դրա կայունությանը»:

Հունիսի սկզբին Հայաստանում կկայանան խորհրդարանական ընտրություններ: Մայիսին Հայաստանը կհյուրընկալի Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը, որին սպասվում է մի շարք եվրոպացի առաջնորդների մասնակցությունը: BBC-ի երկու աղբյուրների փոխանցմամբ, որոնք խոսել են անանունության պայմանով, շուտով կհայտարարվի ԵՄ-Հայաստան առաջին գագաթնաժողովի մասին, որը նույնպես նախատեսված է մայիսին: Աղբյուրներից մեկն այս միջոցառման կազմակերպումը կապել է եվրոպացի առաջնորդների ցանկության հետ՝ քվեարկությունից առաջ հրապարակայնորեն աջակցելու Փաշինյանին: «Անկախ նրանից, թե ինչ դրդապատճառներ ուներ Թրամփը՝ անցյալ օգոստոսին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ համաձայնագիրը կնքելիս, հետեւանքները տեղերում շատ իրական էին: Նրա անձնական աջակցությունը գործարքին օգնեց երկու երկրների առաջնորդներին՝ քաղաքական կամք գտնել հարաբերությունների կարգավորման ուղղությամբ շարժվելու համար, այդ թվում՝ վերջերս փոքրածավալ առեւտրի վերսկսման հարցում»,- եզրափակել է Ջոշուա Կուչերան: Ներհայաստանյան ընդդիմադիր որոշ ուժեր արձագանքել են Վենսի, ասել է թե՝ ԱՄՆ վարչակազմի աջակցությանը Փաշինյանին, դատապարտելով այն: Բայց Արեւմուտքի ակնհայտ աջակցությունը վայելող Փաշինյանի դեմ հակազդեցության ինչ մեխանիզմներ, ինչ հաղթաթղթեր կկարողանա մշակել, կիրառել նույն ընդդիմությունը՝ հայտնի կդառնա հաշված շաբաթներ հետո: Հայաստանի համար կարեւոր հետհաշվարկը սկսված է:

ԻՆՉՊԵՍ Է ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ ՕՐՁՈՒՄ ՕԳՆԵԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Stratfor պարբերականը գրում է, որ Միացյալ Նահանգները խաղադրույք է կատարում այն բանի վրա, որ զգալի տնտեսական օգուտները կարող են ամրացնել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիրքերը Հայաստանի ընտրողների շրջանում՝ առաջիկայում կայանալիք ընտրությունների շեմին: Այս համատեքստում է պարբերականը ներկայացրել ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի այցը Հայաստան, որի ընթացքում ստորագրվեց հայտարարություն այն մասին, որ Միացյալ Նահանգներն ու Հայաստանը համագործակցելու են քաղաքացիական միջուկային էներգետիկայի բնագավառում: Միջուկային այդ համագործակցությունը, ըստ պարբերականի, վկայում է այն մասին, որ Միացյալ Նահանգները ցանկանում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ստորագրված խաղաղության համաձայնագիրը դարձնել իրական տնտեսական եւ էներգետիկ օգուտներ ապահովող հանգամանք Երեւանի համար՝ ամրապնդելով Հայաստանի դիվերսիֆիկացիան դեպի Արեւմուտք եւ հեռացումը Ռուսաստանից ու Իրանից:

Միջուկային համագործակցությամբ, ենթակառուցվածքների, առեւտրի եւ տեխնոլոգիաների ոլորտներում քննարկումներով՝ Միացյալ Նահանգները փորձում է Հայաստանը դարձնել իր համար ռեգիոնալ կապերի հուսալի հենարան՝ հետկոնֆլիկտային ռեգիոնալ համակարգում: Այդ ամենից բացի, Վաշինգտոնը թերեւս խաղադրույք է անում նաեւ այն բանի վրա, որ նկատելի տնտեսական օգուտները՝ Հայաստանում սպասվող ընտրությունների ֆոնին, կամրացնեն գործող վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիրքերը հայաստանցի ընտրողների աչքում, որը նաեւ կնշանակի, որ խաղաղության գործընթացին հանրային աջակցությունը կշարունակի պահպանվել: Եթե Փաշինյանը հունիսին հաղթի ընտրություններում, ապա, տրամաբանորեն, Հայաստանի վրա ամերիկյան ազդեցությունը կավելանա, իսկ խաղաղության օրակարգն ավելի ամուր կմտնի ներքաղաքական կյանք: Պարբերականը գրում է, որ տեւական ժամանակ Հայաստանն էներգետիկայի հետ կապված հարցերում կախված է եղել Ռուսաստանից եւ Իրանից եւ ներկայում ռուսների կողմից ժամանակին կառուցված իր միակ միջուկային ռեակտորի փոփոխության հարցում դիտարկում է մի քանի օտարերկրյա ընկերությունների առաջարկներ, եւ Միացյալ Նահանգներին հնարավոր նախապատվություն տալն ամերիկյան կողմի համար կնշանակի ռազմավարական տեղաշարժ ունենալ՝ ասված է հոդվածում:

«Ռոջեր Էքրոյդի սպանությունը»

Անգլիական դետեկտիվի թագուհի Ագաթա Քրիստիի գրական ժառանգության մեջ «Ռոջեր Էքրոյդի սպանությունը» ընդունված է համարել բոլոր ժամանակների լավագույն դեկտեկտիվ վեպը: Այսպես են գոնե համարել բրիտանական քրեական ժանրում գրող ավելի քան 600 արձակագիր հեղինակներ՝ անցկացված սոցհարցման արդյունքում: Գիրքն առաջին անգամ հրատարակվել է 1926 թվականին: Այն հանդիսանում է Քրիստիի 6-րդ վեպը եւ երրորդը՝ Էրքյուլ Պուարոյի կերպարի մասնակցությամբ: Վեպի հրատարակման պահին, ըստ Քրիստիի ժառանգությունն ուսումնասիրած մասնագետների, հեղինակը 36 տարեկան էր: Սյուժեն հետեւյալն էր. անգլիական Քինգս Էբոթ գյուղում մահանում է մի հարուստ այրի: Շուտով տեղի մեծահարուստ Ռոջեր Էքրոյդը հաղորդում է իր բժիշկ Ջեյմս Շեփարդին, որ այրին սպանել է ամուսնուն, իսկ հետո էլ ինքնասպան եղել: Սա՝ այն դեպքում, երբ Էքրոյդը պետք է ամուսնանար այրու հետ: Շուտով մահացած են գտնում նաեւ Էքրոյդին: Կասկածները տարածվում են Էքրոյդի շրջապատում եղած մի շարք անձանց վրա: Շուտով բժիշկ Շեփարդը պարզում է, որ իր հարեւանությամբ բնակություն է հաստատել մի մասնավոր խուզարկու, որը քաշվել է գործերից եւ ցանկանում է գյուղում հանգիստ ապրել ու վայելել թոշակառուի իր վիճակը: Խուզարկուն Էրքյուլ Պուարոն է: Նա հանձն է առնում հետաքննել այդ սպանությունը: Շեփարդն այս դեպքում փորձում է հանդես գալ որպես Պուարոյի օգնական, թեեւ Պուարոյին նվիրված վեպերում որպես օգնական հանդես է գալիս կապիտան Արթուր Հասթինգսը: Ի վերջո պարզվում է, թե ով է մարդասպանը: Սակայն Պուարոն ոչ թե բարձրաձայն հայտարարում է մարդասպանի անունը, այլեւ հասկացնում է մարդասպանին, որ ամեն բանից տեղյակ է ու թույլ է տալիս, որ վերջինս «լուծի իր հարցերը կյանքի հանդեպ»՝ դժբախտ պատահարի անվան ներքո, որպեսզի ցավ չպատճառի մարդասպանի քրոջը, որը վեպի յուրահատուկ կերպարներից է: Մի շարք գրականագետներ, իհարկե, «Ռ. Էքրոյդի սպանությունը» իդեալական վեպ չեն համարում եւ իրենց վերլուծություններում մանրամասնում են թերություններ, անհավանական զուգադիպություններ եւ այլն, սակայն, այս ամենով հանդերձ, այն շարունակում է մնալ «հարմարավետ դետեկտիվ», որը նախընտրելի կարող է համարվել երեկոյան ընթերցանության համար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ

ՊՂԾՎԱԾ ԽԱՉՔԱՐԸ ԹՈՒԼՈՒԶՈՒՄ՝ ԼՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍՈՒՄ

Անհայտ անձինք պղծել են Ֆրանսիայի Հանրապետության՝ մեծությամբ չորրորդ քաղաք Թուլուզի՝ Ժան Ժորեսի անվան կենտրոնական պողոտայում տեղադրված Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող տուֆակերտ խաչքարը: Հուշարձանն ապականվել է դժվար մաքրվող նյութով: Դեպքի առնչությամբ լրատվամիջոցներից մեկում իր զայրույթն է հայտնել սրտացավ մի ֆրանսուհի՝ Ալիս Էլվան Գելիկը: Չնայած ֆրանսերենի իմ ոչ բավարար իմացությանը՝ թարգմանեցի նրա հուզական արձագանքը, որը վերնագրված է՝ «Անընդունելի է»:

«Հայոց զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը Թուլուզում պղծված է: Նման արարքը «հիմարաբար արված» սխալի արդյունք չէ: Սա լրջագույն ծաղր է զոհերի հիշատակի նկատմամբ: Թուլուզի քաղաքապետարանի լռությունն անընդունելի է: Պետք է անհապաղ գտնել մեղավորներին եւ պատժել»,- գրում է նա: Դժվար է չհամաձայնել այս գնահատականին: Խաչքարը ոչ միայն ցեղասպանության զոհերի հիշատակի խորհրդանիշն է, այլեւ հայ ժողովրդի նվերն է թուլուզցիներին՝ որպես բարեկամության եւ երախտագիտության նշան: Եթե անգամ իրավապահ մարմինները դեռեւս չեն հայտնաբերել հանցագործներին, ապա հուշարձանի մաքրումն ու պատշաճ վիճակի վերականգնումը կարող էին անհապաղ կազմակերպվել:

Թուլուզում գործում է հայկական մեծ համայնք: Բնական է ակնկալել, որ տեղի հայությունն ու համապատասխան կառույցները նույնպես իրենց դիրքորոշումը կհայտնեն: Հասարակական արձագանքը նման դեպքերում ոչ պակաս կարեւոր է, քան իրավական ընթացքը: Արժե հիշել այս խաչքարի պատմությունը: Այն կերտվել է Հայաստանում՝ Վանաձորում: 1993 թվականին՝ խավարի ու ցրտի ծանր տարիներին, «Ինտերկապ» բարեգործական կազմակերպության ավտոշարասյան մեքենաներից մեկը Հայաստան-Վրաստան-Ռուսաստան-Ուկրաինա-Հունգարիա-Ավստրիա-Գերմանիա-Ֆրանսիա շուրջ 6 հազար կիլոմետր ճանապարհ հաղթահարելով՝ խաչքարը հասցրել է Թուլուզ:

Բացման հանդիսավոր արարողությանը ներկա են եղել եւ խոսել են Թուլուզի քաղաքապետ Դոմինիկ Բոդեսը (հետագայում՝ Եվրոպական խորհրդի պատգամավոր), ինչպես նաեւ՝ ՀՀ Ազգային խորհրդի այն ժամանակվա պատգամավոր Արամ Մանուկյանը, որն 90-ի օգոստոսի 23-ին ընթերցել է Հայաստանի անկախության հռչակագիրը: Նույն օրը մեկ այլ խաչքար, որը նվիրվում էր մեծանուն շանսոնյե Շառլ Ազնավուրին, հուզմունքով ընդունել է երգչի օգնական Ժիրայր Մարկոսյանը: Այդ խաչքարը հետագայում տեղափոխվել է Շվեյցարիա եւ տեղադրվել Ժնեւի մերձակայքում գտնվող Ազնավուրի առանձնատան պարտեզում:

Նախաձեռնության հեղինակն ու կազմակերպիչն «Ինտերկապ» բարեգործական կազմակերպությունն էր՝ նախագահ Նորայր Զուլոյանի գլխավորությամբ: Նրա անձնական ու ընկերական կապերի շնորհիվ տարիներ շարունակ եվրոպական երկրներից Հայաստան էին փոխադրվում մարդասիրական բեռներ՝ բուժպարագաներ, դեղորայք, հագուստ, սննդամթերք: Այդ ամենն անվճար բաշխվում էր մեր ժողովրդին: Խաչքարերի նվիրատվությունը երախտագիտության արտահայտություն էր այն երկրների նկատմամբ, որոնք օգնության ձեռք էին մեկնել Հայաստանին: Հետագայում «Ինտերկապի» բեռնատարներով 11 խաչքար տեղափոխվեց, որոնք նվիրեցին եվրոպական տարբեր պետությունների: Դրանք այսօր զարդարում են Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Նիդերլանդների, Ռումինիայի, Հունգարիայի քաղաքների հրապարակներն ու փողոցները:

Այդ խաչքարերից հինգը կերտել է լոռեցի ժողովրդական վարպետ Սերգեյ Դանիելյանը: Տարիներ առաջ նա ինձ տեղեկացրել էր, որ արդեն կերտել է ավելի քան հազար խաչքար եւ հույս ունի կյանքի ընթացքում ստեղծել առնվազն եւս 500-ը: Նրա եւ նման վարպետների աշխատանքը պարզապես քարագործություն չէ. դա հիշողության, հավատքի եւ ինքնության շարունակականություն է:

Այսօր Թուլուզի խաչքարը ժամանակավորապես պղծված է, բայց նրա խորհուրդը չի կարող պղծվել: Այն մնում է որպես հիշողության ու բարեկամության խորհրդանիշ: Հուսանք՝ խաչքարը կվերականգնվի ու կվերադառնա նախնական տեսքին:

ՀԳ. *Խաչքարի տեղադրումն ու դրա պատմությունը մեզ մեկ անգամ եւս հիշեցնում են այն մարդկանց մասին, որոնց շնորհիվ նման արժեքներ են ստեղծվում ու տարածվում աշխարհով մեկ: «Ինտերկապ» բարեգործական կազմակերպության նախագահ Նորայր Զուլոյանն ու ժողովրդական խաչքարագործ վարպետ Սերգեյ Դանիելյանը Լոռվա զավակներ են, ոչ միայն այս նախաձեռնության հեղինակներն են, այլեւ բազմաթիվ այլ գործերի ու բարերարությունների նախաձեռնողներ: Մեր ժողովուրդը, անշուշտ, արժանի է նրանց գործունեությանն ավելի հանգամանորեն ծանոթանալու:*

Նյութերը՝ Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆԻ

ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆՆ ԱՐՁԱԳԱՆՔԵՑ, ԲԱՅՑ ՀԱՐՑԵՐԸ ՄՆԱՑԻՆ

Լոռու մարզպետին ուղղված մեր հարցերը եւ հարցազրույցի առաջարկը, որոնք վերաբերում էին մարզի «ժամառժամ» զարգացման մասին հայտարարությանը, հիշեցնենք, անպատասխան էին մնացել: Մեր արձագանքից հետո՝ «Պատասխանել Լոռու մարզպետի (չ) պատասխանին», ստացել ենք գրավոր արձագանք մարզպետի աշխատակազմից:

Պատասխանում նշվում է, որ մարզում տարբեր ոլորտներում գրանցված արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն ամենօրյա ռեժիմով հրապարակվում է պաշտոնական կայքում եւ սոցիալական հարթակներում, եւ որ այն հասանելի է հանրությանը: Նշվում է նաեւ, որ մարզպետի աշխատակազմն աշխատատեղեր ստեղծելու եւ արտադրական ձեռնարկություններ գործարկելու գործառույթ չունի, սակայն աջակցում է ներդրումային ծրագրերի իրականացմանը՝ իր լիազորությունների սահմաններում: Հավելել են, որ բոլոր 11 համայնքապետարանների հետ առկա են սերտ աշխատանքային հարաբերություններ, իսկ լրատվամիջոցների տպագիր տարբերակ ստանալու անհրաժեշտություն չկա, քանի որ լրահոսին հետեւում են առցանց:

Արձանագրենք՝ սա արդեն առաջընթաց է այն իմաստով, որ մեր հարցադրումները չեն արհամարհվել, փորձել են ինչ-որ կերպ պատասխանել: Սակայն պետք է նաեւ նշենք, որ արձագանքը հիմնականում ընդհանուր բնույթի՝ ոչինչ չասող պատասխաններից է կազմված եւ չի անդրադառնում մեր բարձրացրած կոնկրետ հարցերին՝ ինչ չափելի արդյունքներ են արձանագրվել մարզպետի պաշտոնավարման ընթացքում, քանի նոր աշխատատեղ է ստեղծվել, ինչ ներդրումների մասին է խոսքը՝ թվերով ու ծրագրերով, ինչ քայլեր են ձեռնարկվում՝ նախկին արտադրական հզորությունների վերագործարկման ուղղությամբ:

Այն փաստը, որ տեղեկատվությունը հրապարակվում է կայքում կամ սոցցանցերում, չի փոխարինում ուղիղ եւ ամբողջական պատասխանին, երբ լրատվամիջոցը հարց է ուղղում հանրության անունից: Հանրային պաշտոն զբաղեցնող անձի աշխատանքի կարեւոր բաղադրիչներից մեկը հաշվետվողականությունն է՝ ոչ միայն հաղորդագրությունների, այլեւ հարցուպատասխանի ձեւաչափով: Միեւնույն ժամանակ հույս ունենք, որ մարզպետարանի այս արձագանքը ցույց է տալիս պատրաստակամություն՝ գոնե ընդհանուր դիրքորոշում ներկայացնելու եւ լրագրողի հետաքրքրությունը բավարարելու: Հույս ունենք, որ հաջորդ փուլում արդեն ավելի առարկայական եւ թվերով հիմնավորված պատասխաններ կստանանք, իսկ գուցե անգամ մարզպետը համարձակություն ձեռք բերի եւ ուղիղ հանդիպի լրագրողի հետ, դեմառդեմ պատասխանի նրա հարցերին:

«Հրապարակը» շարունակելու է լուսաբանել Լոռու մարզի խնդիրները, փորձելու է նաեւ պաշտոնական պարզաբանումներ ստանալ: Վստահ ենք՝ որքան բաց եւ փաստարկված լինի լրատվամիջոցներ-մարզպետարան երկխոսությունը, այնքան դրանից կշահի հանրությունը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՍՏԵՐԻ ՏՈՊՐԱԿԸ ՔԻՉ-ՔԻՉ ԲԱՑՎՈՒՄ Է

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հոր հարցազրույցում Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, ինքնախոստովանական ցուցմունք տվեց, հայտարարեց, որ TRIPP-ը ներդրումային ծրագիր է Հայաստանում, Ադրբեջանում TRIPP չկա: «Միացյալ Նահանգներն առաջնորդելու է այդ ներդրումային գործունեությունը: Եվ մենք, այդ թվում՝ ֆրոնտ օֆիսը, բեք օֆիսը, պետք է ընկալենք, եւ այդպես է իրականում, ներդրողի ցանկությունը եւ ներդրողի ձգտումը՝ մատուցել հնարավորինս բարձրորակ եւ գրավիչ ծառայություններ, որպեսզի հնարավորինս շատ մարդ օգտվի դրանից: Որովհետեւ մենք ասում ենք՝ ֆրոնտ օֆիս, բեք օֆիս, բայց ֆրոնտ օֆիսում կարող է ընդհանրապես մարդ չլինել, այլ լինի արհեստական բանականություն, լինեն գերժամանակակից սարքավորումներ, եւ այդ ֆրոնտ օֆիսի հիմնական գործառույթը կարող է լինել այդ սարքավորումների սպասարկումը եւ այլն»: Ասաց, որ քննարկումների առարկա է եղել TRIPP-ի գործողության ժամկետը՝ 99 տարի. «Որոշակի դիսկոմֆորտ ունեինք այս թվերի հետ, նաեւ թիմում, մեկ էլ մի X պահի արձանագրեցինք՝ բայց հլը եկեք մի հատ այլ դիտանկյունից նայենք այս հարցին: ԱՄՆ-ն Հայաստանի Հանրապետությունում առնվազն 99 տարով իրականացնում է ներդրումային ծրագիր: Այսինքն՝ աշխարհի թիվ մեկ գերտերությունն ասում է, որ ՀՀ-ն 99 տարի, որպես անկախ, ինքնիշխան պետություն, գոյություն է ունենալու, լինելու է խաղաղ, եւ այդտեղ լինելու է նորմալ ներդրումային միջավայր: Փնտրում եմ եւ չեմ տեսնում մեր վաղ պատմության մեջ որեւէ մի ժամանակաշրջան, որտեղ մենք մեր առջեւ 99 տարվա հեռանկար ենք ունեցել, 99 տարվա պլան ենք ունեցել եւ այդ 99 տարվա պլանը մենք գծագրել ենք, նախագծել ենք աշխարհի թիվ մեկ գերտերության հետ: Ուզում եմ, որ մենք այս պահն իրոք գնահատենք: Եվ սա հաղորդակցվում եւ թղթակցվում է մեր պետականության հարատեւության այն օրակարգի հետ, որը մենք որդեգրել ենք դեռեւս 2018 թվականին»: Թեմայի մասին զրուցել ենք քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանի** հետ:

- Փաշինյանն իր հարցազրույցում խոստովանեց, որ Ադրբեջանում Թրիփ չի լինելու, այն միայն հայկական կողմին է վերաբերում: Իսկ նախկինում պնդում էր, որ չկա միջանցք, կողմերը հավասար հնարավորություններ են ունենալու եւ այլն:

- Այո, ասեմ ավելին՝ նա նաեւ պնդեց, որ որեւէ մարդ կարող է այնտեղ չլինել, իսկ ինչ է սա նշանակում, որ մեր նախորդ կանխատեսումները լրիվ համապատասխանում են իրականությանը: Այս մարդիկ միջանցք են հանձնում, որի անունը դրել են Թրիփ, բայց խոսքը միջանցքի մասին է... ասում էին՝ Արցախ ենք հանձնում, որ միջանցք չտանք, ստացվում է, որ հանձնեցին Արցախը, հիմա էլ տալիս են միջանցքը: Այդ դեպքում չէին կարող գոնե Արցախը պահել: Այժմ այն ֆունկցիան, որ ստանում է ԱՄՆ-ն, պետք է ունենային ռուսները, սակայն քանի որ ամերիկացիների ետեւում կանգնած են թուրքերը, օրվա իշխանությունների համար ընդունելի տարբերակն ԱՄՆ-ն է: Սա է ողջ իրականությունը: Նիկոլ Փաշինյանի ստերի տոպրակը քիչ-քիչ բացվում է, ինչ խոսք, «իդեալական» աշխատանք է կատարել.... Թրիփ գոյություն չունի, կա միջանցք, որից օգտվելու են Ադրբեջանը, Թուրքիան: Մենք պարբերաբար տեղեկություններ ենք ստանում, որ Հայաստանի օդային տարածքն օգտագործելու համար Ադրբեջանը Հայաստանին փոխանցում է 300 հազար դոլար եւ ավելի: Այժմ տեղի է ունենալու մոտավորապես նույն բանը՝ ցամաքի վրայով, սակայն գումարի 70 տոկոսից ավելին գնալու է ամերիկյան բյուջե: Սա աննկարագրելի մի երեւույթ է: Ասում են՝ 9 միլիարդ ներդրում են կատարելու, բայց անգլերեն հասկացող քիչ թե շատ մարդիկ ի սկզբանե հասկացել են, որ ոչ թե ԱՄՆ-ն է Հայաստանում ներդրում անում, այլ հակառակը՝ 9 միլիարդի ներդրում Վենսն իր հետ տանում է ԱՄՆ: Բայց այստեղ եւս մի կարեւոր հարց. իշխանություններն ասում են՝ ԱՄՆ-ի հետ դաշնակից ենք: Լավ, ենթադրենք՝ ճիշտ են ասում. Հայաստանն է ավելի հզոր, թե՞ Ամերիկան: Կարծես՝ Ամերիկան: Այդ դեպքում ինչո՞ւ ենք մենք ներդրումներ անում, եւ ինչո՞ւ նրանք մեր տնտեսության մեջ ներդրում չեն կատարում: Մենք այն եզակի երկիրն ենք, որ Իրանի եւ ՌԴ-ի դեմ ԱՄՆ-ի ու Թուրքիայի քաղաքականության մեջ խաղաքարտ դառնալու համար վճարել ենք տարածքով, հիմա էլ քեշ փող ենք տալիս:

- Իսկ երբ պրոցեսները մտնեն գործնական փուլ, սրան ինչպե՞ս կարձագանքի ռուսական կողմը:

- Ես կարծում եմ, որ այս ամենն այդպես էլ գործնական փուլ չի մտնի: Խոր կասկածներ ունեմ: Բոլորը բացում են իրենց խաղաքարտերը: Ամերիկան աջակցում է Փաշինյանին, բայց դա այն աջակցությունը չէ, որ կար 2021-ին: Թուրքիան եւ Ադրբեջանը եւս աջակցում են Փաշինյանին, Ռուսաստանը բացարձակ չեզոք է, ձեռնպահ: Նույնը կարող ենք ասել Իրանի դեպքում: Այն աջակցությունը, որ Փաշինյանն ուներ 5 տարի առաջ, այժմ չկա: Եթե քաղաքական փոփոխություններ անգամ չլինեն հունիսին, այդ դեպքում էլ ես չեմ կարծում, որ Թրիփը կյանքի է կոչվելու, որովհետեւ աշխարհաքաղաքական ֆունդամենտալ շրջադարձ է լինելու:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 12.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՎԵՆՍԻ ԽԱՇԼԱՄԱ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՄՆ փոխնախագահ Վենսի՝ Հայաստան այցի տակ այնքան փակ բաներ կան, որ ինչքան էլ բացենք, էլի բացելու բան կմնա: Մենք՝ տրեխավորներս, ինչ ենք ուզում, առհասարակ... Մեր ձեռքի ափի մեջ մի ամբողջ Ամերիկա՞ տեղավորել: Լավ, էլի: Մեկն ասում է՝ Վենսը եկել է TRIPP-ն առաջ տալու, մյուսը գրել էր՝ Հայաստանն են պոկում Ռուսաստանից, երրորդը, թե՝ ԱՄՆ-ն ուզում է դառնալ Հայաստանի էներգետիկ անվտանգության երաշխավորը, չորրորդի կարծիքով՝ եկել էր ընտրություններից առաջ աջակցելու ՀՀ գործող իշխանություններին... Ես էլ նստած՝ նախանձում եմ մեր այդ վերլուծաբաններին ու քաղաքագետներին, որոնք ամեն ինչ գիտեն: Ընդհուպ զարմանում եմ՝ Վենսը, օրինակ, գիտի՞, որ ինքը Հայաստան է եկել ԱՄՆ հարկատուների գումարները մեր առջեւ փռելու: Բայց մերոնցից արդեն ասողներ կան, որ Վենսը 4 միլիարդ էր բերել, 5 միլիարդ էլ մյուս գալուց է բերելու: Գիտակ ենք, հո զոռով չի՞:

Մյուս կողմից էլ՝ Վենսն ամեն օր չէ, որ Հայաստան է գալիս, ու բնական է այս աժիոտաժը: Հետաքրքիր այց էր, անշուշտ: Հավատացեք, որ գործարար Թրամփի վարչակազմը հենց այնպես միլիոններ չէր ծախսի՝ Վենսին Հարավային Կովկաս պտույտների ուղարկելու համար: Շնից մազ պոկող Թրամփը (նա չխորշեց անգամ TRIPP-ում փայ մտնելուց), ձեր կարծիքով, ինչ է, հսկայական էսկադրիլիաների ուղեկցությամբ Վենս կուղարկե՞ր Հայաստան: Ուրեմն տակը մի բան կա: Եկեք դրա անունը դնենք «նոր աշխարհակարգ է ձեւավորվում», բայց չասենք, որ Վենսի այցը հայաստանյան լսարանին էր ուղղված: Ոչ էլ, իմիջիայլոց, Ադրբեջանին էր ուղղված: Այս ամբողջ պատմության մեջ Երեւանն ու Բաքուն ընդամենը բուտաֆորիա են: Այդ քաղաքներում Վենսը մեկական գիշեր քնելուց հետո կվերադառնա ԱՄՆ: Այ, հենց այդ ժամանակ էլ, իմ կարծիքով, կսկսվի ամենահետաքրքիրը:

Ինձ, օրինակ, դուր չեկավ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի՝ այս օրերի տրամադրությունը: ՌԴ պաշտպանության նախարարը հանկարծ հանդիպեց ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի հետ, իսկ Իրանից կրկին միացրին տարածաշրջանում սահմանների փոփոխություն թույլ չտալու մասին ձայնապնակը: Կաթսաները, ինչպես ասում են, սկսեցին եռալ: Իրանը մի փոքր ավելի բացեց փակագծերը՝ սպասեք նոր պատերազմի, զոհերն արդեն նշանակված են: Այս ֆոնին, եթե նկատեցիք, Վենսի այցը միանգամայն այլ իմաստ է ստանում: Կարո՞ղ ենք, օրինակ, ենթադրել, որ Վենսը տարածաշրջան էր եկել ոչ այնքան մի բան տալու, որքան ուզելու նպատակով: Իսկ ինչ կարող էր նա ուզել Հայաստանից ու Ադրբեջանից, եթե հայտնի է, որ ԱՄՆ-ն ուր որ է՝ կամբողջացնի ծովի կողմից Իրանի գլոբալ շրջափակումը: Այո, ԱՄՆ-ին օդուջրի պես նաեւ ցամաքային հենակետ է պետք՝ Իրանին գլոբալ շրջափակման մեջ գցելու համար: Այլ խոսքով՝ Վենսին պետք էր, որ համոզվի՝ Իլհամ Ալիեւը եւ այն մյուս հրաշալի տղան, որոնք վեց ամիս շարունակ Թրամփին ամեն օր շնորհակալություն են հայտնում TRIPP-ի կապակցությամբ, կհամաձայնե՞ն նաեւ իրենց տարածքը տրամադրել՝ Իրանին հարվածելու համար: Ասենք նաեւ, որ այս թեման ԱՄՆ ղեկավարությունը վաղուց է շրջանառում՝ Իրանի միջուկային ծրագրերի շուրջ դեռ առաջին բանակցությունների օրերից: Այն ժամանակ «կլոր սեղանի» շուրջ էին, մի կողմից՝ Իրանը, մյուս կողմերից՝ ԱՄՆ-ն եւ ԵՄ-ն: Հայաստանը եւ Ադրբեջանն այն ժամանակ չհամաձայնեցին բանակցությունների տապալման դեպքում տարածք տրամադրել Արեւմուտքին՝ Իրանին հարվածներ հասցնելու համար: Իսկ այսո՞ր... Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններն ի՞նչ են խոստացել տարածաշրջանում դոլարներ թափահարող եւ ռազմավարական գործընկերություն խոստացող Վենսին: Այս մասին իշխանական շրջանակները թե՞ Ադրբեջանում եւ թե՞ Հայաստանում «խոհեմաբար» լռում են: Մեծամտություն չլինի, բայց նույնիսկ ես եմ գլխի ընկնում, թե 9 միլիարդի անուն լսած ՔՊ-ի ղեկավարն ինչ կարող է ասած լինել Վենսին... Այս օրերին Ռուսաստանի եւ անձամբ Վլադիմիր Պուտինի հասցեին նրա սիրառատ հայտարարություններն ինչի՞ մասին են խոսում: Մտածեք ինքներդ... Արդյոք դրանով չի՞ փորձում այնպես անել, որ շաբաթն ուրբաթից շուտ չգա, եւ ՀԱՊԿ-ը հանկարծ չորոշի Հայաստանը զերծ պահել երրորդ երկրի (այս դեպքում՝ ԱՄՆ-ի) ռազմական «ներխուժումից»:

Թե բա՝ Վենսն էկել ա՝ TRIPP-ն առաջ տալու... Լո՞ւրջ: Ուշքի եկեք, Իրանի հետախուզությունը ձեզ ասել է, որ շուտով խաշլամա է եփվելու, իսկ մսացուներն էլ արդեն հայտնի են:

Եվ վերջում՝ զուտ անձնական մի մտորում: Եթե «հրաշալի տղան» Վենսին ասեր «նյետ», կարող ա՞ Թրամփը «Մադուրո» օպերացիա աներ Հայաստանում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am